

Handwritten signature

Խրիմյան Հայրիկի անվան հ.10 հիմնական դպրոց
Տարեկան թեմատիկ պլանավորում

Աշխարհագրություն
6-րդ դասարան
(34ժամ, շաբաթական 1ժամ)

Հաստատում եմ՝



Ն.Միմոնյան

2023-2024 ուստարի

Handwritten signature

Խրիմյան Հայրիկի անվան հ.10 հիմնական դպրոց
Տարեկան թեմատիկ պլանավորում

Աշխարհագրություն
6-րդ դասարան
(34ժամ, շաբաթական 1ժամ)

Հաստատում եմ՝



Ն.Միմոնյան

2023-2024 ուստարի

6-րդ դասարան
Աշխարհագրություն

Շաբաթական 1 ժամ ընդ, 34 ժամ

Ժամ	Դաս	Թեմա 1. Աշխարհագրական թաղանթ
Նպատակը		<ul style="list-style-type: none"> Գաղափար կազմի աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշների և աշխարհագրական թաղանթի զարգացման էտապների մասին, իմանա մարդու ծագման ժամանակաշրջանը, գաղափար կազմի Պանգեյա ցամաքի տրոհումից առաջացած մայրցամաքների և դրանց մասերի մասին, ծանոթանա հիմնական կլիմայական գոտիների բնութագրերին, հասկանա լայնակի զոնայականության երևույթը, ծանոթանա բնական զոնաների բնութագրերին:
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> Իմանա աշխարհագրական թաղանթի սահմաններն ըստ ոլորտների, թվարկի աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշները, իմանա Երկրի զարգացման էտապները, Լավրասիայից և Գոնդվանայից առաջացած մայրցամաքները, կարողանա թվարկել և քարտեզի վրա ցույց տալ կլիմայական գոտիները, թվարկել և միմյանցից տարբերել բնական զոնաները:
1	1էջ5	Աշխարհագրական թաղանթ. կառուցվածքը, հատկանիշները
Նպատակը		<ul style="list-style-type: none"> Գաղափար կազմի աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշների մասին:
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> Իմանա աշխարհագրական թաղանթի սահմաններն ըստ ոլորտների, թվարկի հիմնական հատկանիշները:
1	2էջ9	Աշխարհագրական թաղանթի զարգացումը: Երկրագնդի խոշոր պլատֆորմները
Նպատակը		<ul style="list-style-type: none"> Ծանոթանա աշխարհագրական թաղանթի զարգացման էտապներին, իմանա մարդու ծագման ժամանակաշրջանը, գաղափար կազմի Պանգեյա ցամաքի տրոհումից առաջացած մայրցամաքների և դրանց մասերի մասին:

Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> Իմանա Երկրի զարգացման էտապները, Լավրասիայից և Գոնդվանայից առաջացած մայրցամաքները:
1	3էջ14	Օդային զանգվածներ, կլիմայական գոտիներ
Նպատակը		<ul style="list-style-type: none"> Ծանոթանա հիմնական կլիմայական գոտիների բնութագրերին:
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> Կարողանա թվարկել և քարտեզի վրա ցույց տալ կլիմայական գոտիները:
1	4էջ21	Հորիզոնական զոնայականություն, վերընթաց գոտիականություն
Նպատակը		<ul style="list-style-type: none"> Հասկանալայնակի զոնայականության երևույթը:
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> Իմանա և կարողանա թվարկել բնական զոնաները:
1	5էջ26	Բնական զոնաներ, դրանց աշխարհագրական տարածումը
Նպատակը		<ul style="list-style-type: none"> Ծանոթանաբնականզոնաներիբնութագրերին:
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> Կարողանա թվարկել և միմյանցից տարբերել բնական զոնաները:
		Թեմա 2. Մայրցամաքներ և օվկիանոսներ
Նպատակը		<ul style="list-style-type: none"> Գաղափար կազմիԵրկրի ընդհանուր մակերեսի, ջրի և ցամաքի զբաղեցրած տարածքների մասին, հասկանա ՝ ինչ է մայրցամաքը, ինչ է աշխարհամասը:
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> Կարողանա թվարկել և քարտեզի վրա ցույց տալ աշխարհամասերը, իմանա Երկրի ընդհանուր մակերեսը, ջրի և ցամաքի զբաղեցրած տարածքները:
1	6էջ32	Ի՞նչ է ուսումնասիրում մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը
		Թեմա 3.Աֆրիկա
Նպատակը		<ul style="list-style-type: none"> Ծանոթացնել Աֆրիկայի աշխարհագրական դիրքին,ափագծի կտրտվածությանը : Գաղափար կազմի մայրցամաքի մակերևույթի բազմազանության,խոշոր գետերի(ըստ հոսքի ավազանների) մասին: Ծանոթացնել Աֆրիկայի բնական զոնաների հողաբուսական ծածկին և կենդանական աշխարհին:

Վերջնար- դյունքները		<ul style="list-style-type: none"> • Իմանա Աֆրիկայի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունը: • Իմանա Աֆրիկան Եվրասիայից բաժանող սահմանը և մայրցամաքի խոշոր գետերն ըստ հոսքի ավազանների: • Իմանա սավանաների, անապատների, խոնավ հասարակածային անտառների բնական զոնաների բնութագրերը:
1	7էջ35	Աշխարհագրականդիրքը, ավազիծը, ռելիեֆը
1	8էջ40	Կլիման, ներքինջրերը
1	9էջ47	Բնականզոնաները: Սավանաներիզոնայիբնութագիրը
Թեմա 4. Ավստրալիա		
Նպատակը		<ul style="list-style-type: none"> • Ծանոթանա Ավստրալիայի մակերևույթի խոշոր ձևերին: • Գաղափար կազմի Ավստրալիայում տարածված կլիմայական գոտիների, բնական զոնաների, մայրցամաքի ամենախոնավ վայրի վերաբերյալ: • Ծանոթանա Ավստրալիայում տարածված օրգանական աշխարհի առանձնահատկություններին:
Վերջնար- դյունքները		<ul style="list-style-type: none"> • Կարողանա թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Ավստրալիայի մակերևույթի խոշոր ձևերը, կլիմայական գոտիները, բնական զոնաները, ամենախոնավ բնակավայրը և մակագրել ուրվագծային քարտեզի վրա:
1	10 էջ53	Ընդհանուրբնութագիրը
1	11 էջ59	Բուսական և կենդանական աշխարհի յուրահատկությունները
Թեմա 5. Անտարկտիդա		
Նպատակը		<ul style="list-style-type: none"> • Ծանոթանա Անտարկտիդայի կլիմայական պայմանների առանձնահատկություններին:
Վերջնար- դյունքները		<ul style="list-style-type: none"> • Ներկայացնել մայրցամաքի աշխարհագրական դիրքը և բնութագրել անտարկտիկական և մերձանտարկտիկական կլիմայական գոտիները :
1	12 էջ63	Ընդհանուրբնութագիրը
1	13 էջ69	Թեմայի ամփոփում
1		Թեմատիկ գրավորաշխատանք

		Թեմա 6. Հարավային Ամերիկա
Նպատակը		<ul style="list-style-type: none"> • Ծանոթանա աշխարհագրական այն օբյեկտներին, որոնցով Հարավային Ամերիկան բաժանվում է հարևան մայրցամաքներից : • Գաղափար կազմի ափամերձ տարածքով անցնող օվկիանոսային հոսանքների, մայրցամաքի խոշոր գետերի, լճերի մասին: • Ծանոթանա Հարավային Ամերիկայում տարածված կլիմայական գոտիներին, բնական զոնաներին: Գաղափար կազմի լյանոս, կամպոս, սելվաս, պամպա, պարամոս հասկացությունների մասին:
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> • Կարողանա թվարկել և քարտեզի վրա ցույց տալ այն աշխարհագրական օբյեկտները, որոնցով Հարավային Ամերիկան բաժանվում է հարևան մայրցամաքներից: • Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքի ափամերձ ջրերով անցնող օվկիանոսային հոսանքները, խոշոր գետերը, լճերը, կլիմայական գոտիները, բնական զոնաները և դրանք հնարավորինս մակագրել ուրվագծային քարտեզի վրա՝ օգտվելով համապատասխան քարտեզներից, ատլասներից: • Կարողանա բացատրել լյանոս, կամպոս, սելվաս, պամպա, պարամոս հասկացությունները:
1	14 Էջ71	Աշխարհագրական դիրքը, ափագիծը, մակերևույթը
1	15 Էջ76	Կլիման, ներքին ջրերը
1	16 Էջ83	Բնական զոնաները: Վերընթաց գոտիականությունն Անդերում
1		<i>Գործնական աշխատանք</i>
		Թեմա 7. Հյուսիսային Ամերիկա
Նպատակը		<ul style="list-style-type: none"> • Ծանոթացնել մայրցամաքի ափերը ողողող ծովերին, ծոցերին, ներկայացնել կղզիներն ու թերակղզիները: • Գաղափար կազմի մակերևույթի հիմնական ձևերի վերաբերյալ: • Ծանոթացնել կլիմայաստեղծ գործոններին և ջրագրական ցանցի աշխարհագրական պատկերին: • Ծանոթանա մայրցամաքի բուսական և կենդանական աշխարհի յուրահատկություններին:
Վերջնարդյունքները		

		<ul style="list-style-type: none"> • Իմանա մայցամաքի ավերը ողողող հիմնական ծովերը, ծոցերը, կղզիները և թերակղզիները: • Իմանա Հյուսիսային Ամերիկայի մակերևույթի հիմնական ձևերը և դրանց տարածման շրջանները: • Ներկայացնել Հյուսիսային Ամերիկայի կլիմայաստեղծ գործոնները, խոշորագետերն ըստ հոսքի ավազանների, խոշոր լճերը:
1	17 Էջ89	Աշխարհագրականդիրքը, ավազիծը, մակերևույթը
1	18 Էջ95	Կլիման, ներքինջրերը
1	19 Էջ10 2	Բնականգոնաները

Ժամ	Կետ	Թեմա 8. Եվրասիա
Նպատակը		<ul style="list-style-type: none"> • Գաղափար կազմի մայրցամաքում Ալպ-Հիմալայան և Խաղաղօվկիանոսյան <<Հրե օղակ>>գեոսիսկլիմալային գոտիների մասին : • Ծանոթացնել մայրցամաքում առավել տարածված կլիմայական գոտիներին, կլիմայական պայմաններին: • Գաղափար կազմի Եվրասիա մայրցամաքի խոշոր գետերի և լճերի մասին: • Գաղափար կազմի մայրցամաքում տարածված բնական զոնաների մասին:
Վերջնար- ոյունքները		<ul style="list-style-type: none"> • Իմանա կլիմայաստեղծ հիմնական գործոնները: • Իմանա Եվրասիա մայրցամաքի առավել խոշոր գետերն ըստ հոսքի ավազանների, Եվրասիայի խոշոր լճերն ըստ ծագման: • Իմանա և տարբերի բարեխառն գոտու անտառների ենթազոնաները:
1	21էջ 108	Աշխարհագրական դիրքը, ակերը ողողող ծովերը, ավազիծը
1	22էջ 114	Երկրաբանական կառուցվածքը:Երկրաշարժերի և հրաբուխների տարածաման շրջանները
1	23էջ 117	Մակերևույթը, խոշոր հարթավայրերը և լեռները
1	24էջ 120	Եվրասիայի կլիման
1	25էջ 123	Կլիմայական գոտիները և մարզերը
1	26էջ 129	Եվրասիայի ներքին ջրերը
1	27էջ 136	Բնական զոնաները: Բարեխառն գոտու անտառներ և տափաստաններ
		Թեմա 9.Օվկիանոսներ

Նպատակը		<ul style="list-style-type: none"> • Ծանոթանա օվկիանոսների չափերին, օրգանական աշխարհի տեսակային կազմերին :
Վերջնար- դյունքները		<ul style="list-style-type: none"> • Ներկայացնել յուրաքանչյուր օվկիանոսի աշխարհագրական դիրքը աշխարհի ֆիզիկական քարտեզի վրա: • Բնութագրել օվկիանոսների օրգանական աշխարհը:
1	28 էջ 140	Խաղաղ և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսների բնութագիրը
1	29 էջ 143	Ատլանտյան և Հնդկական օվկիանոսների բնութագիրը
1		Թեմատիկ գրավոր
1		Գործնական աշխատանք
2	34	Կրկնություն

Թեմատիկայան

Աշխարհագրական թաղանթ. կառուցվածքը, հատկանիշները

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար

. Նշել աշխարհագրական թաղանթի տարածման սահմաններն ըստ ոլորտների, ո՞ր ոլորտներն են ամբողջությամբ մտնում թաղանթի կազմի մեջ, որո՞նք՝ մասնակի:

. Որո՞նք են աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշները: Ներկայացնել աշխարհագրական թաղանթի մեկ կամ երկու հատկանիշ:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

✓Քարտուրտի վերին շերտի /մինչև 4-5 կմ խորությունները/, մթնոլորտի ստորին շերտի /մինչև օգոնի շերտը՝ 25-30 կմ բարձրությունները/, ամբողջ ջրոլորտի, կենսոլորտի և մարդոլորտի միասնության և փոխազդեցության ոլորտը կոչվում է աշխարհագրական թաղանթ:

✓Աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշներն են՝ նյութերի և էներգիայի շրջապտույտը, աշխարհագրական թաղանթի միասնականությունը, երևույթների ուղիղությունը, աշխարհագրական թաղանթի գոտիականությունը և գոնայականությունը:

- ✓ Աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշներների բնութագրեր / մեկ կամ երկու/:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•Ներկայացնել աշխարհագրական թաղանթի սահմաններն ըստ ոլորտների:

•Թվարկել աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշները:

[Թեմատիկ պլան](#)

Աշխարհագրական թաղանթի զարգացումը: Երկրագնդի խոշոր պլատֆորմները

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

. Աշխարհագրական թաղանթի զարգացման ի՞նչ էտապներ են առանձնացնում, ե՞րբ է առաջացել մարդը:

. Ի՞նչ ցամաքների է բաժանվել Պանգեյը, ո՞ր օվկիանոսն է առաջացել, ե՞րբ և ո՞ր մայրցամաքներն են առաջացել Գոնդվանայի և Լավրասիայի տրոհումից:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓ Երկրի և աշխարհագրական թաղանթի զարգացման և ձևավորման ամբողջ ժամանակաշրջանը գիտնականները բաժանել են երեք հիմնական էտապի՝ երկրաբանական, կենսաբանական, անթրոպոգեն: Անթրոպոգեն էտապը սկսվել է մոտ 40 հազար տարի առաջ և շարունակվում է մինչև մեր օրերը, այս էտապի կարևոր իրադարձությունը մարդու ծագումն է:

✓ Պանգեյա խոշոր ցամաքը մասնատվել է երկու ցամաքների՝ Գոնդվանայի և Լավրասիայի, որոնց միջև տարածվել է Թետիս օվկիանոսը: Հին դարաշրջանի վերջից սկսվել է Գոնդվանայի աստիճանական մասնատումը, որից առաջացել են Աֆրիկան, Ավստրալիան, Հարավային Ամերիկան, Անտարկտիդան, իսկ Լավրասիայի տրոհումից առաջացել են Հյուսիսային Ամերիկա և Եվրասիա մայրցամաքները: Այս մայրցամաքների շուրջն առաջացել են ներկայիս օվկիանոսները:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•Թվարկել աշխարհագրական թաղանթի զարգացման էտապները:

•Ներկայացնել Պանգեյի տրոհման ընացքը, քարտեզի վրա ցույց տալ Գոնդվանայի և Լավրասիայի տրոհումից առաջացած մայրցամաքները:

[Թեմատիկ պլան](#)

Օդային զանգվածներ, կլիմայական գոտիներ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար

.Ի՞նչ է կլիմայական գոտին: Թվարկիր կլիմայական գոտիները: Ո՞ր կլիմայական գոտում է գտնվում ՀՀ-ն:

.Բնութագրել հիմնական կլիմայական գոտիները:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓Կլիմայական գոտիները Երկրի վրա առանձնացված բնատարածքային համալիրներ են, որոնց առանձնացումը կատարվում է Արեգակից ստացվող ջերմության քանակի և օդային զանգվածների շրջանառության հիման վրա, որոնք գոտևորում են երկրագունդը՝ ձգվելով արևմուտքից արևելք և հաջորդում են իրար հասարակածից դեպի բևեռներ ուղղությամբ: Գիտնականներն առանձնացնում են 13 կլիմայական գոտիներ՝ հասարակածային, երկու մերձհասարակածային, երկու արևադարձային, երկու մերձարևադարձային, երկու բարեխառն, մերձարկտիկական, մերձանտարկտիկական, արկտիկական, անտարկտիկական:

ՀՀ-ն գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտում:

✓Հիմնական կլիմայական գոտիների բնութագրեր:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ հիմնական և անցումային կլիմայական գոտիները:

•Բնութագրել հիմնական կլիմայական գոտիները:

Հորիզոնական զոնայականություն, վերընթաց գոտիականություն

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար

•Ի՞նչ է հորիզոնական զոնայականությունը, և՞ ի՞նչ է այն խախտվում:

• Թվարկել հիմնական բնական զոնաները:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓Երկրի մակերևույթի հարթավայրային տարածքներում բնական զոնաները ձգվում են արևմուտքից արևելք ուղղությամբ և հերթափոխում են միմյանց բևեռներից դեպի հասարակած: Այդպիսի զոնայականությունը կոչվում է հորիզոնական կամ լայնակի զոնայականություն: Երբեմն կլիմայական պայմանների փոփոխության պատճառով հորիզոնական զոնայականությունը խախտվում է և բնական զոնաները ձգվում են տարբեր ուղղություններով: Բնական զոնաների հորիզոնական տարածումը ընդհատվում է նաև լեռնային երկրներում:

✓Յամաքի վրա հյուսիսից հարավ միմյանց հերթափոխում են հետևյալ բնական զոնաները՝ սառցային, տունդրայի, բարեխառն գոտու անտառների, տափաստանների, անապատների, սավանաների, հասարակածային խոնավ մշտադալար անտառների զոնաներ:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•Ներկայացնել հորիզոնական զոնայականությունը:

•Թվարկել վերը նշված հիմնական բնական զոնաները:

Թեմատիկ պլան

Բնական զոնաներ, դրանց աշխարհագրական տարածումը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար

•Ի՞նչ է հողի գործունյա շերտը, ո՞ր զոնային է բնորոշ, բնութագրել այդ զոնան /տալ տունդրայի բնութագիրը/:

•Մավանաների զոնայում տարվա ո՞ր սեզոնն է խոնավ և ինչու՞, բնութագրել սավանաների բնական զոնան:

• Ներկայացնել բնական զոնաների բնութագրեր / ցանկությամբ մեկ կամ երկու զոնա/:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓Տունդրայի զոնային բնորոշ է հողի բազմամյա սառածությունը, որի մակերեսային բարակ շերտը կարճատև ամռան ընթացքում հալվում է մինչև որոշակի խորություն, իսկ ձմռանը՝ սառչում, այն անվանում են գործունյա շերտ:

✓Մավանաների զոնայի կլիման սեզոնային է, ձմռանը թափանցում են արևադարձային տաք և չոր օդային զանգվածները, առաջացնելով չոր սեզոնը, իսկ ամռանը թափանցում են հասարակածային տաք և խոնավ օդային զանգվածները, առաջացնելով խոնավ սեզոնը, սավանայում տեղումների 80 % -ը թափվում է ամռանը:

- ✓ Բնական զոնաների բնութագրեր / տունդրա, սավանա, ցանկությամբ՝ ևս մեկ կամ երկու զոնայի բնութագիր/:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•Ներկայացնել իր սովորած բնական զոնաների առանձնահատկությունները:

•Ճանաչել և տարբերել բնական զոնաները:

Թեմատիկ պլան

Ի՞նչ է ուսումնասիրում մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

.Որքա՞ն է կազմում Երկրի ընդհանուր տարածքը, որքա՞ն տարածք է զբաղեցնում ցամաքը, որքա՞ն տարածք է զբաղեցնում Համաշխարհային օվկիանոսը:

.Ի՞նչ է մայրցամաքը, ի՞նչ է աշխարհամասը: Թվարկել աշխարհամասերը:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

.Երկրի ամբողջ տարածքը կազմում է 510 մլն կմ քառ. , որից ցամաքի տարածքը զբաղեցնում է 29 % կամ 149 մլն կմ քառ. , իսկ 361 մլն կմ քառ. զբաղեցնում է Համաշխարհային օվկիանոսը:

.Ցամաքի ընդարձակ տարածությունները, որոնք շրջապատված են օվկիանոսներով, կոչվում են մայրցամաքներ: Մայրցամաքներն իրենց շրջապատող կղզիների հետ միասին պայմանականորեն կոչվում են աշխարհամասեր: Երկրի ամբողջ ցամաքը պայմանականորեն բաժանվել է վեց աշխարհամասերի, դրանք են՝ Եվրոպա, Ասիա, Ամերիկա, Ավստրալիա և Օվկիանիա, Անտարկտիկա, Աֆրիկա:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•Ուրվագծային քարտեզի վրա մակագրել մայրցամաքներն ու օվկիանոսները:

•Թվարկել բոլոր աշխարհամասերը:

[Թեմատիկ պլան](#)

Աֆրիկա.

Աշխարհագրական դիրքը, ափագիծը, ռելիեֆը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար

.Ինչու՞ է Աֆրիկայի ափագիծը քիչ կտրտված և ո՞ր մայցամաքին է ամենամոտը գտնվում:

.Աֆրիկայի մակերևույթում ռելիեֆի ի՞նչ ձևեր են տիրապետում :

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓Աֆրիկայի ափագիծը քիչ է կտրտված,քանի որ ափագծի մեծ մասն ունի պլատֆորմային կառուցվածք:Արևելքում՝Հնդկական օվկիանոսի մեջ է խորանում Սոմալի խոշոր թերակղզին, ինչպես նաև՝ Հնդկական օվկիանոսի մաս կազմող Կարմիր ծովը և Ադենի ծոցը, արևմուտքում է գտնվում Ատլանտյան օվկիանոսի մաս կազմող

Գվինեական ծովածոցը, հյուսիսից մայրցամաքի ափերը ողողում են Միջերկրական ծովի ջրերը: Աֆրիկան Եվրասիայից բաժանվում է Ջիբրալթարի նեղուցով, Միջերկրական ծովով, Սուեզի ջրանցքով, Կարմիր ծովով, Բար-Էլ-Մանդեբի նեղուցով, Ադենի ծովածոցով:

✓ Աֆրիկայում մակերևույթում տիրապետող ռելիեֆի ձևերն են սարահարթերը և բարձրավանդակները: Դրանցից են Սահարա, Սուդանի, Արևելաաֆրիկյան, Նուբիական, Կալահարի, Նամիբ սարահարթերը, իսկ Արևելաաֆրիկյան բեկվածքային գոտում է գտնվում մայրցամաքի ամենախոշոր լեռնաշխարհը՝ Եթովպական լեռնաշխարհը:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

.Աֆրիկայի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքի ափերը ողողող ծովերը, ծոցերը, ինչպես նաև Աֆրիկան Եվրասիայից բաժանող ուղին:

.Աֆրիկայի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տալ խոշոր անապատային սարահարթերը:

[Թեմատիկ պլան](#)

Աֆրիկայի կլիման, ներքին ջրերը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

.Որո՞նք են Աֆրիկայի կլիմայի և մարդկային զարգացման գործոնները:Թվարկել Աֆրիկայում տարածված կլիմայական գոտիները:

.Թվարկե՛լ Աֆրիկայի խոշոր գետերն ըստ հոսքի ավազանների և խոշոր լճերը:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓Աֆրիկայի կլիմայի և մարդկային զարգացման վրա ազդում են աշխարհագրական դիրքը,մթնոլորտի շրջանառությունը,լեռների դիրքադրությունը,ափերի մոտով անցնող ծովային հոսանքները:Աշխարհագրական դիրքով պայմանավորված Աֆրիկայի հյուսիսային և հարավային մասերում կլիմայական գոտիները հավասարաչափ կրկնվում են՝ հասարակածային,մերձհասարակածային,արևադարձային,մերձարևադարձային:Հասարակածային դիրքի շնորհիվ Աֆրիկայում ընդարձակ տարածում ունեն հասարակածային,մերձհասարակածային և արևադարձային կլիմայական գոտիները:

✓Աֆրիկայի գետերի մեծ մասը պատկանում են Ատլանտյան օվկիանոսի ավազանին,որտեղ նշանավոր է Նեղոսը(6671կմ), Նիգերը և Օրանժը:Հնդկական օվկիանոսի ավազանի պատկանող խոշոր գետերից են Զամբեզին,Լիմպոպոն:Ներքին անհոսք ավազանի խոշոր գետը Շարին է,որը թափվում է Չադ լիճ:Աֆրիկայի լճերից են Տանգանիկան , Նյասան,Վիկտորիան,Ռուդոլֆը:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•.Աֆրիկայի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տալ Աֆրիկայի խոշոր գետերն ըստ հոսքի ավազանների:

•.Աֆրիկայի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքի խոշոր լճերը:

Բնական զոնաները: Սավանաների զոնայի բնութագիրը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար

.Թվարկերէ՛լ Աֆրիկայի բնական զոնաները:

.Բնութագրէ՛լ Աֆրիկայում առավել մեծ տարածում ունեցող բնական զոնաները:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓Աֆրիկայի բնական զոնաներն են խոնավ հասարակածային մշտադալար անտառների,սավանանների և նոսր անտառների,անապատների և կիսաանապատների,մերձարևադարձայի մշտադալար կոշտատերև անտառների բնական զոնաները:

✓ Առավել տարածված բնական զոնաներն են սավանանները,հասարակածային մշտադալան անտառները,անապատները:

Տրված բնական զոնաների հողերի,բուսական և կենդանական աշխարհի բնութագրեր:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•Քարտեզի վրա ցույց տալ Աֆրիկայի բնական զոնաները:

•Միմյանցից տարբերել յուրաքանչյուր բնական զոնային բնորոշ բույսերը և կենդանիները:

Թեմատիկ պլան

Ավստրալիա.

Ընդհանուր բնութագիրը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

. Բնութագրել Ավստրալիայի մակերևույթի հիմնական ձևերը:

. Կլիմայական ո՞ր գոտիների սահմաններում է ձգվում Ավստրալիան և որտե՞ղ են թափվում ամենաշատ տեղումները:

. Որո՞նք են Ավստրալիայի խոշոր գետն ու լիճը:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓Ավստրալիայի արևմուտքում տարածված է Արևմտաավստրալական սարահարթը, դեպի արևելք՝ Կենտրոնաավստրալական ընդարձակ դաշտավայրը, որի կենտրոնում գտնվում է Էյր լճի իջվածքը /-12մ/:Մայրցամաքի արևելյան մասում հյուսիսից հարավ ձգվում է Մեծ ջրբաժան լեռնաշղթան:

Ավստրալիան միակ մայրցամաքն է, որտեղ բացակայում են երիտասարդ ծայքավոր լեռնային համակարգերը, գործող հրաբուխներն ու ժամանակակից սառցադաշտերը:

✓Ավստրալիայում հյուսիսից հարավ իրար են հաջորդում մերձհասարակածային, արևադարձային, մերձարևադարձային կլիմայական գոտիները: Ամենաշատ տեղումներ

Թափվում են մայրցամաքի հյուսիսարևելյան հատվածում, Մեծ ջրբաժան լեռնաշղթայի հյուսիսային մասի հողմակողմ լանջերին՝ Քեռնս բնակավայրում (4000մ)։

✓Տաք և չորային կլիմայի պատճառով Ավստրալիայի գետային ցանցը թույլ է զարգացած։ Մայրցամաքի ամենախոշոր գետը Մուրեյն է՝ Դառլինգ վտակով։ Ավստրալիայում լճեր քիչ կան, ամենախոշորը էյրն է։

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Ավստրալիայի կլիմայական գոտիները, Քեռնս բնակավայրը։

•Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Ավստրալիայի մակերևույթի խոշոր ձևերը։

. Համապատասխան քարտեզի վրա ցույց տալ Մուրեյը, Դառլինգը և էյր լիճը։

Թեմատիկ պլան

Բուսական և կենդանական աշխարհի յուրահատկությունները

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

•Թվարկել՝ Ավստրալիայում տարածված բնական զոնաները, ո՞ր բնական զոնան է առավել տարածված մայրցամաքում։

. Որտե՞ղ են տարածված էվկալիպտների անտառները և ինչպիսի՞ առանձնահատկություն ունեն դրանք։

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓Ավստրալիայում տարածված են սավանաների և նոսրանտառների, արևադարձային անտառների, անապատների և կիսանապատների բնական զոնաները,վերջինս ամենամեծ տարածումն ունի մայրցամաքում:

✓Էվկալիպտների անտառները տարածված են մայրցամաքի հյուսիսում ընկած սավանաների և նոսրանտառների զոնայի կարմրագորշ հողերում, Մեծ ջրբաժան լեռնաշղթայի հողմակողմ լանջերին՝ արևադարձային անտառներում: Հանդիպում են ավելի քան 100 մետր բարձրության էվկալիպտներ, որոնք արմատներով, հսկա պոմպերի նման, հողից դուրս են քաշում խոնավությունը: Էվկալիպտների միջոցով մարդիկ տաք երկրներում չորացնում են գերխոնավ հողերը և ճահիճները:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Ավստրալիայում տարածված բնական զոնաները և անվանել առավել մեծ տարածում ունեցող բնական զոնան:

•Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Էվկալիպտների տարածման շրջանները և ներկայացնել դրանց առանձնահատկությունները:

Թեմատիկ պլան

Անտարկտիդա.

Ընդհանուր բնութագիրը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

- . Որո՞նք են Անտարկտիդայի ափերը ողողող ծովերը: Ո՞րն է ամենամոտ մայրցամաքը:
- . Ինչպիսի՞ն է կլիմայի տարբերությունը ձմռանը և ամռանը: Որտե՞ղ և ինչքա՞ն է դիտվել մեր մոլորակի ամենացածր ջերմաստիճանը:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓ Անտարկտիդայի ափերը ողողող ծովերն են Ուեդդելի, Ռոսսի, Ամունդսենի, Բելինսհաուզենի և Համագործակցության ծովերը :

Անտարկտիդան մայրցամաքներից հարևան է միայն Հարավային Ամերիկային, որից բաժանվում է Դրեյկի փոթորկոտ և լայն նեղուցով, որի ուղղությամբ նեղ շերտով ձգվում է Անտարկտիկական թերակղզին:

✓ Ձմռանը փչում են ուժեղ քամիներ՝ մինչև 40-60մ /վրկ,իսկ մայրցամաքի ներքին շրջաններում օդի ջերմաստիճանը միջինը -70°C է: Ամռանը մայրցամաքի ներքին շրջաններում ջերմաստիճանը հասնում է մինչև -40°C -ի:

Անտարկտիդան համարվում է մեր մոլորակի ցրտի բևեռը, այստեղ է գրանցվել Երկրի ամենացածր ջերմաստիճանը՝ $-88,3^{\circ}\text{C}$:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Քարտեզի վրա ցույց տալ Անտարկտիդայի ավերը ողողող ծովերը , Դրեյկի նեղուցը, Անտարկտիկական թերակղզին:
- Ներկայացնի մայրցամաքի աշխարհագրական դիրքի և կլիմայի միջև եղած կապը :

Թեմատիկ պլան

Հարավային Ամերիկա.

Աշխարհագրական դիրքը, ափագիծը, մակերևույթը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

. Ո՞ր մայրցամաքների մոտ է գտնվում Հարավային Ամերիկա մայրցամաքը և ինչո՞վ է բաժանվում Անտարկտիդայից:

. Հարավային Ամերիկայի ափամերձ ջրերով ո՞ր օվկիանոսային հոսանքներն են անցնում և ո՞ր օվկիանոսի ազդեցությունն է առավել մեծ մայրցամաքի վրա:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓Հարավային Ամերիկա մայրցամաքը հարավից Մագելանի նեղուցով բաժանվում է Հրո Երկիր կղզուց , իսկ վերջինս Դրեյկի լայն նեղուցով` Անտարկտիդայից, իսկ հյուսիսում Պանամայի նեղ պարանոցով միանում է Հյուսիսային Ամերիկային:

✓Հարավային Ամերիկայի ավիամերձ ջրերով անցնում են հյուսիսից և արևելքից ողողող Ատլանտյան օվկիանոսի` Գվիանական և Բրազիլական տաք, հարավարևելքից` Ֆոլկլենդյան սառը ծովային հոսանքները: Խաղաղ օվկիանոսի ավիամերձ ջրերով անցնում է Պերուական սառը հոսանքը:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•Անվանել և քարտեզի վրա ցույց տալ այն աշխարհագրական օբյեկտները , որոնցով Հարավային Ամերիկան բաժանվում է հարևան մայրցամաքներից:

•Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Հարավային Ամերիկայի ավիամերձ ջրերով անցնող օվկիանոսային հոսանքները և դրանք մակագրել ուրվագծային քարտեզի վրա` օգտվելով դասագրքի քարտեզից:

[Թեմատիկ պլան](#)

Հարավային Ամերիկայի կլիման,ներքին ջրերը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

.Թվարկել Հարավային Ամերիկայի խոշոր գետերը (ըստ հոսքի ավազանների) և լճերը:

.Որո՞նք են Հարավային Ամերիկայի կլիմայաստեղծ գործոնները, թվարկել Հարավային Ամերիկայի կլիմայական գոտիները :

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ✓ Հարավային Ամերիկայի խոշոր գետերը պատկանում են Ատլանտյան օվկիանոսի ավազանին, դրանցից են՝ Ամազոնը, Օրինոկոն, Պարանան՝Պարագվայ վտակով,Ուրուգվայը և այլն: Խաղաղ օվկիանոսի ավազանին պատկանում են Անդերից սկիզբ առնողմի քանի կարճ գետեր:Լճերից են՝ Տիտիկական,Պոոպոն, Մարակյբոն:
- ✓ Հարավային Ամերիկայի կլիմայաստեղծ գործոններն են՝ աշխարհագրական դիրքը, մթնոլորտի շրջանառությունը, ռելիեֆը, փերը ողողող օվկիանոսները: Հարավային Ամերիկայի կլիմայական գոտիներն են՝ հասարակածային, մերձհասարակածային, արևադարձային, մերձարևադարձային, բարեխառն :

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- ✓ Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Հարավային Ամերիկայի խոշոր գետերը՝ ըստ հոսքի ավազանների, լճերը և մակագրել ուրվագծային քարտեզի վրա:
- ✓ Թվարկել կլիմայական գոտիները և մակագրել ուրվագծային քարտեզի վրա՝ օգտվելով դասագրքի համապատասխան քարտեզից :

Բնական զոնաները: Վերընթաց գոտիականությունն Անդերում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

.Թվարկել Հարավային Ամերիկայում տարածված բնական զոնաները, բնութագրել մեկ կամ երկու առավել մեծ տարածում ունեցող զոնաներ:

.Բացատրել հետևյալ հասկացությունները՝ լյանոս, կամպոս, սելվաս, պամպա, պարամոս:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓Հարավային Ամերիկայում տարածված են հասարակածային խոնավ անտառների, սավանաների և նոսրանտառների, տափաստանների, արևադարձային անապատների, կիսանապատների զոնաները: Մեծ տարածում ունի հասարակածային խոնավ մշտադալար անտառների զոնան, որտեղ աճում են 40000-ից ավելի բուսատեսակ, ծառային բուսականությունը եռահարկ է: Բուսական և կենդանական աշխարհի տեսակային կազմով այս անտառներն իրենց հավասարը չունեն, կենդանական աշխարհը շատ հարուստ է և բազմազան:

Մեծ տարածում ունեն նաև սավանաների և նոսրանտառներ զոնաները, որոնք զբաղեցնում են Օրինոկոյի դաշտավայրը, իսկ հարավում՝ Բազիլական սարահարթը: Ծածկված են հացազգի խոտաբույսերով, հանդիպում են նաև արմավենիների, արաուկարիաների նոսրանտառներ: Կենդանիներից տարածված են զրահակիրներ, մրջնակերներ, վայրի խոզեր և այլն:

✓Լյանոս՝ Օրինոկոյի դաշտավայրում տարածված սավանաները, կամպոս՝ Բրազիլական սարահարթի սավանաները, սելվաս՝ հասարակածային խոնավ մշտադալար անտառների զոնան Հարավային Ամերիկայում, պամպա՝ Լա Պլատայի դաշտավայրում տարածված մերձարևադարձային տափաստանները, պարամոս՝ Անդերում բարձրալեռնային մարգագետինները:

:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•Թվարկել և Հարավային Ամերիկայի բնական զոնաների քարտեզի վրա ցույց տալ բնական զոնաները, 2-3 նախադասությամբ բնութագրել առավել տարածված երկու բնական զոնա:

•Բացատրել ` լյանոս, կամպոս, սելվաս, պամպա, պարամոս հասկացությունները:

[Թեմատիկ պլան](#)

Հյուսիսային Ամերիկա.

Աշխարհագրական դիրքը, ափագիծը, մակերևույթը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

. Թվարկել Հյուսիսային սառուցյալ, Ատլանտյան, Խաղաղ օվկիանոսի ավազանների մաս կազմող խոշոր ծովերը, ծոցերը, մայրցամաքի ափամերձ կղզիները և թերակղզիները:

.Թվարկել Հյուսիսային Ամերիկայի խոշոր հարթավայրերը և լեռները:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասում է գտնվում Կանադական արկտիկական կղզիախումբը, Հուդզոնի ծանծաղ ծովածոցը, Լաբրադորյան թերակղզին, Ատլանտյան օվկիանոսի մաս են կազմում Սուրբ Լավրենտիոսի, ֆանդի (որտեղ գրանցվել է աշխարհի ամենաբարձր մակընթացության ալիքը) , Մեքսիկական ծովածոցերը, Մարգասյան անափ ծովը, Նյուֆաունդլենդ կղզին, Խաղաղ օվկիանոսի մաս կազմող Ալյասկայի ծոցը, Կալիֆոռնիական ծոցը, Բերինգի ծովը:

✓Արևմուտքում ձգվում են Կորդիլիերների բարձր լեռները,արելքում՝ Ապալաչյան հին քայքայված լեռները,որտեղ գտնվում է աշխարհի ամենամեծ քարայրը՝ Մամոնտի քարայրը: Խոշոր հարթավայրերը ձգվում են կենտրոնական մասում, տարածվելով Հուդզոնի ծոցից մինչև Մեքսիկական ծոց, դրանցից են՝ Լավրենտյան սարահարթը,Մերձմեքսիկական,Մերձատլանտյան,Միսիսիպիի դաշտավայրերը,Կենտրոնական և Մեծ հարթավայրերը:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ վերը նշված ծովերը,ծոցերը,կղզիները և թերակղզիները:
- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մակերևույթի խոշոր միավորները:

[Թեմատիկ պլան](#)

Հյուսիսային Ամերիկայի կլիման,ներքին ջրերը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

. Որո՞նք են Հյուսիսային Ամերիկայի կլիմագոյացնող գործոնները:Թվարկել մայրցամաքում տարածված կլիմայական գոտիները:

. Թվարկե՛լ Հյուսիսային Ամերիկայի գետերն ըստ հոսքի ավազանների,ի՞նչ խոշոր լճեր գիտեք:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

✓ Հյուսիսային Ամերիկայի կլիմայաստեղծ գործոններն են՝ հյուսիսից հարավ մեծ ձգվածությունը,ռելիեֆը,գերիշխող քամիները,Կորդիլիերների բարձր լեռնային համակարգը: Հյուսիսային Ամերիկայում տարածված են արկտիկական, մերձարկտիկական,բարեխառն, մերձարևադարձային, արևադարձային, ծայր հարավում՝մերձհասարակածային կլիմայական գոտիները, որոնցից առավել մեծ տարածում ունի բարեխառն գոտին:

✓Ատլանտյան օվկիանոսի ավազանին պատկանող խոշոր գետն է Միսիսիպին իր Միսսուրի վտակով,որը Հյուսիսային Ամերիկայի ամենաերկար գետն է (մոտ 6000կմ՝ հաշված Միսսուրիի ակունքից): Ատլանտյան օվկիանոսի ավազանին են պատկանում նաև Մեծ լճերը(Վերին,Հուրոն,Միչիգան,Էրի,Օնտարիո), որոնքՍուրբ Լավրենտիոս գետով միանում են Ատլանտյան օվկիանոսին:Խաղաղ օվկիանոսի ավազանին պատկանող խոշոր գետերից են Կոլումբիան և Կոլորադոն՝ իր խորը կիրճով: Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ավազանին պատկանող խոշոր գետ է Մակենզին:Այստեղ են Մեծ արջի,Ստրուկների մեծ,Աթաբասկա լճերը:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

•Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Հյուսիսային Ամերիկայի կլիմայական գոտիները:

•Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքի խոշոր գետերը և լճերը:

Թեմատիկ պլան

Հյուսիսային Ամերիկայի բնական զոնաները

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

.Թվարկել Հյուսիսային Ամերիկայի բնական զոնաները :

.Բնութագրել առավել տարածված բնական զոնաները:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

. Հյուսիսային Ամերիկայում տարածված են հետևյալ բնական զոնաները՝ արկտիկական անապատների, տունդրայի, բարեխառն գոտու անտառների, անտառատափաստանների և տափաստանների, անապատների, մշտականաչ անտառների և թփուտների, խոնավ մերձարևադարձային անտառների, արևադարձային խոնավ անտառների և սավանաների զոնաները: Մայրցամաքի հյուսիսում զոնաները ձգվում են արևմուտքից արևելք, իսկ բարեխառն և մերձարևադարձային գոտիներում՝ հյուսից հարավ ուղղությամբ:

.Բնական զոնաների՝ սառցային, տունդրային, բարեխառն գոտու անտառների, տափաստանների բնութագրեր (հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը):

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

.Թվարկել և համապատասխան քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքի բնական զոնաները:

. Բնութագրել մի քանի բնական զոնա:

[Թեմատիկ պլան](#)

Եվրասիա

Աշխարհագրական դիրքը, ափերը ողողող ծովերը, ափագիծը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

. Որո՞նք են Եվրասիայի ափերը ողողող խոշոր ծովերը, ծոցերը:

. Ո՞րն է մայրցամաքի ամենախոշոր թերակղզին և կղզեխումբը :

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- Եվրասիայի ափերը ողողում են Հնդկական օվկիանոսի մաս կազմող Արաբական ծովը, Կարմիր ծովը, Բենգալյան ծոցը, Խաղաղ օվկիանոսում՝ Հարավ --Չինական, Դեղին, Ճապոնական, Բերինգի և Օխոտի ծովերը, Ատլանտյան օվկիանոսում՝ Միջերկրական, Հյուսիսային, Բալթիկ ծովերը և Բիսկայան ծոցը, Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում՝ Բարենցի, Կարայի, Լապտևների ծովերը:
- Ամենախոշոր թերակղզին Արաբականն է, իսկ կղզեխումբը՝ Մալայանը /Զոնդյան/:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ խոշոր ծովերն ու ծոցերը:
- Եվրասիայի քարտեզի վրա ցույց տալ խոշոր կղզեխումբը և թերակղզին:

Թեմատիկ պլան

Երկրաբանական կառուցվածքը: Երկրաշարժերի և հրաբուխների տարածաման շրջանները

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

. Ի՞նչ գործող հրաբուխներ գիտես Ալպ-Հիմալայան գեոսինկլինալային գոտում:

. Ի՞նչ հրաբուխներ գիտես Խաղաղօվկիանոսյան <<Հրե օղակի>> գեոսինկլինալային գոտում:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- **Գեոսինկլինալային շրջաններում լեռնակազմական պրոցեսներն ուղեկցվել են սեյսմիկ և հրաբխային երևույթներով:**
- **Ալպ-Հիմալայան գոտում գործող հրաբուխներից են Վեգուվը և Էտնան /Իտալիա/,Նեմրութը, Թոնդրակը: Գործող հրաբխային շրջաններից են նաև Իսլանդիան / Հեկլա հրաբուխ/ :**
- **Խաղաղօվկիանոսյան գոտում են Կլուչևսկայա Սոպկան՝ 4750մ(Կամչատկա),Ֆուձիյաման(Ճապոնիա), Կրակատաուն(Չոնդյան նեղուց):**

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- **Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Եվրասիայի գեոսինկլինալային շրջանները:**
- **Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ վերը թվարկված գործող հրաբուխները :**

Թեմատիկ պլան

Մակերևույթ:Խոշոր հարթավայրերը և լեռները

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

- . **Ո՞ր լեռնաշղթաներն են մտնում Ալպ-Հիմալայան գեոսինկլինալային գոտու մեջ:**
- . **Ի՞նչնշանավոր հարթավայրեր կան Եվրասիայում:**

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- **Ալպ-Հիմալայան գոտում են գտնվում Պիրենեյները,Ալպերը, Կարպատները,Մեծ Կովկասը, Էլբուրսը, Հինդուկուշը,Հիմալայները, Կարակորումը :**

- Նշանավոր են Արևմտասիբիրական,Թուրանի, Մեծ Չինական, Մեկոնգի, Միջին և Ստորին Դանուբյան դաշտավայրերը: Նշանավոր սարահարթերից են՝ Տակլա - Մական , Գոբի, Դեկանի, Միջին Սիբիրական սարահարթերը:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- Ուրվագծային քարտեզի վրա մակագրել Եվրասիայի առավել հայտնի լեռնաշղթաները:
- Ուրվագծային քարտեզի վրա մակագրել Եվրասիայի խոշոր հարթավայրերը:

Թեմատիկ պլան

Եվրասիայի կլիման

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

- . Ինչո՞վ է պայմանավորված Եվրասիայի կլիմայի բազմազանությունը:
- . Ի՞նչ օդային զանգվածներ են ազդում Եվրասիայի կլիմայի ձևավորման վրա:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- Կլիմայի բազմազանությունը պայմանավորված է մայրցամաքի մեծ ձգվածությամբ ինչպես հյուսիսից հարավ,այնպես էլ արևմուտքից արևելք ուղղությամբ:Մայրցամաքի հյուսիսը մոտենում է բևեռին,իսկ հարավը՝ հասարակածին, այդ պատճառով էլ տարածված են բոլոր կլիմայական գոտիները:Արևմուտքից արևելք մեծ ձգվածության շտրհիվ կլիմայական պայմանները փոխվում են նաև մայրցամաքի առափնյա շրջաններից դեպի ներքին շրջաններ ուղղությամբ շարժվելիս, այդ պատճառով էլ որոշ կլիմայական գոտիների ներսում ձևավորվում են կլիմայական մարզեր:
- Եվրասիայի կլիման ձևավորվում է բոլոր չորս օդային զանգվածների ազդեցության ներքո:Տարածքի մեծ մասի վրա հատկապես մեծ ազդեցություն է թողնում Բարեխառն օդային զանգվածը:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Եվրասիայի ծայրակետերը:
- Թվարկել Եվրասիայի վրա ձևավորված օդային զանգվածները:

Թեմատիկ պլան

Կլիմայական գոտիները և մարզերը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

. Թվարկել Եվրասիայի կլիմայական գոտիները և մարզերը:

. Բնութագրելերկու կամ երեք կլիմայական գոտի:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- Եվրասիան ընկած է հասարակածային, մերձհասարակածային, արևադարձային, մերձարևադարձային (մերձարևադարձային միջերկրածովային, մերձարևադարձային ցամաքային, մերձարևադարձային մուսսոնային), Բարեխառն(բարեխառն ծովային,բարեխառն ցամաքային,բարեխառն խիստ ցամաքային, բարեխառն մուսսոնային),մերձարկտիկական, արկտիկական կլիմայական գոտիներում:
- Եվրասիային բնորոշ կլիմայական գոտիների բնութագրեր (իր ցանկությամբ ներկայացնի մի քանի կլիմայական գոտու բնութագիր):

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Եվրասիայի կլիմայական գոտիները:
- Կարողանաբնութագրելմայրցամաքի կլիմայական գոտիներից /ցանկությամբ՝ մի քանիսը/:

Թեմատիկ պլան

Եվրասիայի ներքին ջրերը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

- . Թվարկել Եվրասիայի խոշոր գետերն ըստ հոսքի ավազանների:
- . Ներկայացնել Եվրասիայի լճերն ըստ ծագման:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- Եվրասիայի գետերը պատկանում են 5 հոսքի ավազանների՝ բոլոր չորս օվկիանոսների ավազաններին և Կենտրոնաասիական ներքին անհոսք ավազանին:

Խաղաղ օվկիանոսի ավազանին պատկանում են մայրցամաքի առավել ջրառատ գետերը, որոնցից խոշոր են Յանցզին, Հուանհեն, Մեկոնգը և Ամուրը: Հնդկական օվկիանոսի ավազանին պատկանող նշանավոր գետերն են Ինդոսը, Գանեսը, Իրավադին, Եփրատը և Տիգրիսը: Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ավազանին պատկանում են խոշոր գետեր Պեչորան, Հյուսիսային Դվինան, Ենիսեյը, Լենան, Օբը: Ատլանտյան օվկիանոսի ավազանին պատկանող խոշոր գետերից են Դանուբը, Հոենոսը, Դնեպրը, Դոնը, Վիսլան, Էլբան: Ներքին անհոսք ավազանին պատկանող խոշոր գետերից են Վոլգան, Ուրալը, Կուրը, Արաքսը, Սիրդարյան, Ամուդարյան:

- Եվրասիայի խոշոր լճերի թվարկում և բնութագրում ըստ ծագման:

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- Թվարկել լ և քարտեզի վրա ցույց տալ Եվրասիայի առավել խոշոր գետերը:
- Թվարկել լ և քարտեզի վրա ցույց տալ Եվրասիայի առավել խոշոր լճերը :

[Թեմատիկ պլան](#)

Բնական զոնաները: Բարեխառն գոտու անտառներ և տափաստաններ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

. Թվարկե՛լ Եվրասիայում տարածվող բնական զոնաները հյուսիսից հարավ ուղղությամբ:

. Ի՞նչ ենթազոնաների է բաժանվում Բարեխառն գոտու անտառների զոնան, բնութագրել այդ ենթազոնաները:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- Եվրասիայում հանդիպում են գրեթե բոլոր բնական զոնաները, հյուսիսից հարավ ուղղությամբ իրար են հաջորդում սառցային, տունդրայի և անտառատունդրայի, Բարեխառն գոտու անտառների, անտառատափաստանների ու տափաստանների, կիսաանապատների ու անապատների, սավանաների, արևադարձային և հասարակածային խոնավ մշտականաչ անտառների բնական զոնաները:
- Բարեխառնգոտու անտառների զոնան տարածվում է Ատլանտյան օվկիանոսի առաջ փնյա շրջաններից մինչև Մադագոսկարի և Այսոպոնի քամիների արևմտյան կողմերը, իսկ անտառների զոնաները տարածվում են արևելքից արևմուտք:
- Բարեխառնգոտու անտառների բնական զոնայի ենթազոնաների բնութագրերը:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- Թվարկել Եվրասիայի բնական զոնաները:
- Քարտեզի վրա ցուց տալ Եվրասիայի բնական զոնաները:

[Թեմատիկ պլան](#)

Խաղաղ և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսների բնութագիրը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

- . Որքա՞ն տարածք են զբաղեցնում Խաղաղ և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսները:
- . Նշել վերոհիշյալ օվկիանոսների օրգանական աշխարհում առավել տարածված կենդանատեսակները :

Առարկայի չափորոշային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- Խաղաղ օվկիանոսը զբաղեցնում է 179 մլն. կմ² տարածք,իսկ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը՝ 13մլն կմ²:

- Խաղաղ օվկիանոսում ավելի քան 2000 ձկնատեսակ է տարածված՝ ձողաձուկը, սկումբրիան, սարդինիան, տափակաձուկը և այլն: Առավել հարուստ է բարեխառն լայնությունների թթվածնով հարուստ ջրերի օրգանական աշխարհը: Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում առանձնանում են վահանաձուկը, ձողաձուկը, փրփրուկը, խոշոր կաթնասուններից սառը ջրերում շատ են կետերը, փոկերը, ծովափղերը:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- Ուրվագծային քարտեզի վրա մակագրել վերը նշված օվկիանոսները:
- Օգտվելով ատլասներից մակագրել և գունավորել օվկիանոսների կլիմայական գոտիները :

Թեմատիկ պլան

Ատլանտյան և Հնդկական օվկիանոսների բնութագիրը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները ստուգելու համար.

- . Բնութագրել Հնդկական և Ատլանտյան օվկիանոսների օրգանական աշխարհը:
- . Ներկայացնել Հնդկական և Ատլանտյան օվկիանոսների միջին ջերմաստիճանը և աղիությունը:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- Հնդկական օվկիանոսի օրգանական աշխարհը շատ հարուստ է մայրցամաքային ծանծաղուտներում և կորալային խութերի տարածման շրջաններում: Օվկիանոսում տարածված կենդանատեսակներից են սարդինիան, սկումբրիան, շնաձուկը, ծովային կրիաները, օձերը, ծովաստղերը և այլն: Ատլանտյան

օվկիանոսի օրգանական աշխարհի տեսակային կազմն ավելի աղքատ է, բայց քանակական կազմը հարուստ է: Ատլանտյան օվկիանոսում առավել տարածված են թրածուկը, շնածուկը, սարդինիան, ձողաձուկը և առատորեն աճում են սարգասյան ջրիմուռները:

- Ատլանտյան օվկիանոսի միջին ջերմաստիճանը $+17^{\circ}\text{C}$ է, իսկ աղիությունը՝ $35,4\%$, Հնդկական օվկանոսն աշխարհի ամենատաք ($+20^{\circ}\text{C}$) և ամենաաղի ($36,5\%$) օվկիանոսն է:

Առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- Բնութագրել Ատլանտյան և Հնդկական օվկիանոսների օրգանական աշխարհը:
- Համեմատել Ատլանտյան և Հնդկական օվկիանոսների միջին ջերմաստիճանները և աղիությունը:

Handwritten signature

Խրիմյան Հայրիկի անվան հ. 10 հիմնական դպրոց
Տարեկան թեմատիկ պլանավորում

Աշխարհագրություն
7-րդ դասարան

(68 ժամ, շաբաթական 2 ժամ)

Հաստատում եմ՝

Ն. Սիմոնյան

2023-2024 ուստարի

Երևանի տրիբյան ճայրիկի անվան թիվ 10 հիմնական դպրոց

ՇԱԲԱԹԱԿԱՆ 2 ԺՍՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 7-րդ դասարան
Դասընթացի թեմատիկ պլանավորումը (տարեկան՝ 68 ժամ)

- ❖ Քարտեզի վրա ցույց տալ Կարսի և Աշոցքի սարահարթերը և Սև ծովը:
- ❖ Ներկայացնել ամառվա և ձմեռվա ցերեկվա տևողությունը :
- ❖ **Բացատրել ջերմաստիճանի նվազման օրինաչափությունը :**
- ❖ **Թվարկել լեռնաշխարհի կլիմայաստեղծ գոտիները:**

Ջրագրական ցանցը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր ջրային ավազաններին են պատկանում Հայկական լեռնաշխարհի գետերը :

2. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի նշանավոր գետերը:

3. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերը :

4. Ինչպիսի՞ սնում ունեն Հայկական լեռնաշխարհի գետերը:

5. Ինչպե՞ս են դասակարգվում Հայկական լեռնաշխարհի լճերը ըստ ծագման:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

❖ Հայկական լեռնաշխարհի գետերը պատկանում են Կասպից և Սև ծովերի, Պարսից ծոցի ավազաններին :

❖ Հայկական լեռնաշխարհի

նշանավոր գետերն են՝ Եփրատը, Տիգրիսը, Արաքսը(հայոց մայր գետ), Կուրը և Ճորոխը:

❖ Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերն են Ուրմիան , Վանը և Սևանը:

❖ Հայկական լեռնաշխարհի գետերը հիմնականում ունեն խառը սնում՝ անձրևային, ձնահալոցքային, ստորգետնյա:

❖ Լճերն ըստ ծագման լինում են տեկտոնական, տեկտոնահրաբխային, սառցադաշտային, հրաբխային, արգելափակման, խառնարանային:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

❖ Թվարկել , որ ջրային ավազաններին են պատկանում Հայկական լեռնաշխարհի գետերը:

❖ Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհի նշանավոր գետերը / առնվազն երկու/:

❖ Քարտեզի վրա ցույց տալ Վանա, Ուրմիա և Սևանա լճերը:

❖ Տարբերակել գետերը ըստ սնման ռեժիմի(բերել օրինակներ) :

❖ Թվարկել լճերը ըստ ծագման (բերել օրինակներ):

Թեմատիկ պլան

Հողերը, բուսականությունը, կենդանական աշխարհը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է ամենատարածված հողատիպը Հայկական լեռնաշխարհում :
2. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի ամենատարածված բուսատեսակները:
3. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի ամենատարածված կենդանատեսակները:
4. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի վերընթաց լանդշաֆտային գոտիները:
5. Ի՞նչ գործոնների ազդեցությամբ է ձևավորվել Հայկական լեռնաշխարհի բուսական և կենդանական աշխարհը/բերել երկու օրինակ/:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- ❖ Հայկական լեռնաշխարհի ամենատարածված հողատիպը՝ սևահողերն են:
- ❖ Հայկական լեռնաշխարհի ամենատարածված բուսատեսակներն են՝ ցորեն, մասրենի, ուրց:
- ❖ Հայկական լեռնաշխարհի ամենատարածված կենդանատեսակներ են՝ օձեր, գայլ, աղվես, լոր:
- ❖ Վերընթաց լանդշաֆտային գոտիներն են մերձարևադարձային, անապատակիսանապատային, լեռնատափաստանային, լեռնանտառային, մերձալպյան-ալպյան և ձյունամերձ:
- ❖ Հայկական լեռնաշխարհի բուսական և կենդանական աշխարհը ձևավորվել է բազմաթիվ գործոնների փոխազդեցության արդյունքում:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Տարբերել տարածված հողատիպերը Հայկական լեռնաշխարհում:
- ❖ Թվարկել մի քանի բուսատեսակ:
- ❖ Թվարկել մի քանի կենդանատեսակ
- ❖ Թվարկել Հայկական լեռնաշխարհի վերընթաց լանդշաֆտային գոտիները:
- ❖ Թվարկել բուսական և կենդանական աշխարհի ձևավորման գործոնները / կովկասյան, իրանական, միջերկրածովյան մարզերի շփման գոտում գտնվելը /:

Թեմատիկ պլան

Ընդհանուրակնարկ ՀՀ սահմանների ձևավորումը, աշխարհագրական դիրքը հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որքա՞ն է ՀՀ տարածքը :
 2. Որքա՞ն է ՀՀ բնակչության թիվը :
 3. Որո՞նք են ՀՀ-ի հարևան պետությունները :
- 4. Ե՞րբ է ստեղծվել ՀՀ երրորդ հանրապետությունը:**
- 5. Ո՞ր աշխարհագրական կոորդինատներում է գտնվում ՀՀ-ն և որքա՞ն է ամենաերկար ձգվածությունը:**

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- ❖ ՀՀ տարածքը կազմում 29743 քառ. կմ:
- ❖ ՀՀ բնակչության թիվն է 2,963 հազ. մարդ :
- ❖ ՀՀ հարևան պետություններ են՝ Վրաստանը, Իրանը, Թուրքիան, Ադրբեջանը :
- ❖ Երրորդ հանրապետությունը ստեղծվել է 1991թ. Մեպտեմբերի 21-ին :
- ❖ ՀՀ-ի տարածքն ընկած է հս.լ $38^{\circ} 50' - 41^{\circ} 18'$ և արլ. ե. $43^{\circ} 27' - 46^{\circ} 37'$ միջև: Ունի հյուսիս-արևմուտքից հարավ - արևելք՝ 360 կմ ձգվածություն:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Քարտեզի վրա ցույց տալ ՀՀ-ի տարածքը:
- ❖ Ներկայացնել ՀՀ-ի բնակչության թիվը:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ հարևան պետությունները :
- ❖ Նշել Երրորդ հանրապետության տարթիվը :
- ❖ Նշել ՀՀ-ի տարածքն ու ձգվածությունը:

Վարչատարածքային կառուցվածքը և տարածքային կառավարումը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են ՀՀ վարչական միավորները :
2. Ո՞րն է ՀՀ -ի մայրաքաղաքը :
3. Ինչպիսի՞ն է ՀՀ ներկայիս վարչատարածքային կառուցվածքը:
4. Որո՞նք են ՀՀ մարզերը և մարզկենտրոնները:

5. Որքա՞նք աղաքային և գյուղական համայնքներ ունի ՀՀ-ն:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- ❖ ՀՀ վարչական միավորներն են՝ մարզերն ու համայնքները:
- ❖ ՀՀ մայրաքաղաքը:
- ❖ ՀՀ ներկայիս վարչատարածքային կառուցվածքը:
- ❖ ՀՀ-ի մարզերն ու մարզկենտրոնները:
- ❖ ՀՀ-ն ունի 49 քաղաքային և 866 գյուղական համայնքներ

առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Քարտեզի վրա ցույց տալ մարզերը:
- ❖ Քարտեզի վրա ցույց Երևան քաղաքը:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ իր բնակության մարզը և մարզկենտրոնը:
- ❖ Բացատրել իր համայնքում իրականացվող տեղական ինքնակառավարումը:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ ՀՀ խոշոր քաղաքները:

Թեմա՝ Հայաստանի Հանրապետության բնությունը

Երկրաբանական կառուցվածքը: Օգտակար հանածոները:

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ինչու է ՀՀ տարածքը լեռնային:

2. Որո՞նք են օգտակար հանածոների գլխավոր հանքատեսակները :

3. Որո՞նք են ՀՀ-ում տարածվող հանքային ջրերի աղբյուրները:

4. Ո՞ր լեռնակազմության շնորհիվ է հանրապետության տարածքը թևակոխել ցամաքային զարգացման փուլ:

5. Թվարկել օգտակար հանածոների նշանավոր հանքավայրերն ու հանքատեսակները:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

❖ ՀՀ տարածքը գտնվում է երիտասարդ ալպիիմալայան գեոսինկլինալային գոտում :

❖ Մետաղային և ոչ մետաղային հանածոներ :

❖ Ջերմուկի, Արզնի, Դիլիջանի, Հանքավանի հանքային ջրերը :

❖ Հանրապետության տարածքը թևակոխել է ցամաքային զարգացման փուլ կայնոզոյան դարաշրջանի նեոգենի ժամանակաշրջանում, ալպյան լեռնակազմության ընթացքում:

❖ Ալավերդի և Կապան՝ պղնձահրաքարային, Քաջարան, Ագարակ, Թեղուտ՝ պղնձամոլիբդենային, Ախթալա, Շահումյան, Կապան՝ բազմամետաղներ, Հրազդան, Աբովյան, Սվարանց՝ երկաթաքար, Սոտք, Մեղրաձոր՝ ոսկի, ոչմետաղներից՝ շինանյութեր՝ պեմզա, Անիպեմզա, Արթիկ, Երևան՝ կերակրի աղ:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

❖ Քարտեզի վրա ցույց տալ Հայաստանի տեղը՝ Ալպ-Հիմալայան գեոսինկլինալային համակարգում:

❖ Թվարկել մետաղական օգտակար հանածոներ:

❖ Թվարկել ոչ մետաղական օգտակար հանածոներ :

❖ Թվարկել ՀՀ հանքային ջրերի աղբյուրները :

❖ Քարտեզի վրա ցույց տալ հանքավայրերը:

Մակերևույթը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է ՀՀ ամենաբարձր կետը:

2. Որտե՞ղ է գտնվում ՀՀ ամենացածր կետը:

3. Ո՞րն է ՀՀ ամենաերկար լեռնաշղթան :

4. Որքա՞ն է ՀՀ մակերևույթի միջին բարձրությունը, առավելագույն և նվազագույն բացարձակ բարձրությունների տարբերությունը:

5. Որո՞նք են ՀՀ լեռնագրական մարզերը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

❖ Արագածի լեռնագագաթն է (4090 մ):

❖ ՀՀ տարածքի ամենացածր կետը Դեբեդ գետի հովիտն է՝ 375մ:

❖ Զանգեզուրի լեռնաշղթան ամենաերկարն է :

❖ ՀՀ միջին բարձրությունը 1800մ, հարաբերական բարձրությունը՝ $4090 - 375 = 3715$ մ:

❖ Հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզ, հարավային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզ, հրաբխային լեռավահանների և սարավանդների մարզ, միջինարաքսյան գոգավորության մարզ:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

❖ Քարտեզի վրա ցույց տալ Արագած լեռը :

❖ Քարտեզի վրա ցույց տալ Դեբեդ գետը:

❖ Քարտեզի վրա ցույց տալ Զանգեզուրի լեռնաշղթան :

❖ Հաշվել ՀՀ հարաբերական բարձրությունը:

❖ Քարտեզի վրա ցույց տալ լեռնագրական մարզերը:

Թեմատիկ պլան

Մակերևույթը(շարունակությունը)

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1.Ո՞րն է ՀՀ–ում բարձրությամբ երկրորդ գագաթը:

2.Ո՞րն է ամենաընդարձակ հարթավայրը:

3. Որո՞նք են Սևանը եզրավորող լեռնաշղթաները:

4.Որո՞նք են ՀՀ հրաբխային լեռնավահաններն ու սարավանդները:

5.Ի՞նչ մասերի է բաժանվում Միջինարաքսյան գոգավորությունը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

❖ ՀՀ երկրորդ գագաթը՝ Կապուտջուղն է՝ 3904 մ :

❖ Ամենաընդարձակ հարթավայրը Արարատյան դաշտն է :

❖ Սևանը եզրավորվում է Գեղամա և Վարդենիսի լեռնավահաններով, Արեգունու, Սևանի և Արևելյան Սևանի լեռնաշղթաներով:

❖ ՀՀ-ի լեռնավահաններն են՝ Արագածի, Ջավախքի, Եղնախաղի, Աշոցքի, Գեղամա, Վարդենիսի և Սյունիքի հրաբխային բարձրավանդակը:

❖ Բաժանվում է երկու մասի՝ Արարատյան և Նախիջևանի գոգավորությունների:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

❖ Քարտեզի վրա ցույց տալ Կապուտջուղ գագաթը:

❖ Քարտեզի վրա ցույց տալ ամենաընդարձակ հարթավայրը:

❖ Քարտեզի վրա ցույց տալ Սևանը եզրավորող լեռնաշղթաները:

❖ Քարտեզի վրա ցույց տալ հրաբխային լեռնավահաններն ու սարավանդները:

❖ Քարտեզի վրա ցույց տալ Արարատյան և Նախիջևանի գոգավորությունները:

Թեմատիկ պլան

Կլիմայի ընդհանուր բնութագիրը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր կլիմայական գոտում է գտնվում ՀՀ-ն:

2. Նշել

ՀՀ

այն

բնակավայրերը, որտեղ դիտվում է ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանները:

3. Ե՞րբ են դիտվում առավելագույն տեղումները:

4. Որո՞նք են ՀՀ կլիմայաստեղծ գործոնները:

5. Ի՞նչ է ջերմաստիճանային շրջադասությունը(ինվերսիա):

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ ՀՀ գտնվում է մերձարևադարձային գոտու հյուսիսային լայնություններում :
- ❖ Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է Մեդրիում, ամենացածրը՝ Պադակն բնակավայրում:
- ❖ Առավելագույն տեղումները թափվում են մայիս-հունիս ամիսներին :
- ❖ ՀՀ կլիմայաստեղծ գործոններն են՝ արևադարձային տաք և չոր օդային զանգվածները, բարեխառն օդային զանգվածները, օդային զանգվածների արևմտյան հոսքը, մակերևույթի լեռնային բնույթը, օդի տեղական շրջապտույտը(գերիշխող լեռնահովտային քամիներ), Մև և Կասպից ծովերի ազդեցությունը:
- ❖ Ձմռանը գոգավորությունների հատակում կուտակվում է սառը և ծանր օդը, իսկ վերևում՝ համեմատաբար ավելի տաք ու թեթև օդը , որի արդյունքում ներքևում օդի ջերմաստիճանը ավելի ցածր է, քան վերևում:

առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Քարտեզի վրա ցույց տալ ՀՀ-ի ամենաբարձր ջերմաստիճան ունեցող բնակավայրը՝ Մեդրին:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ Աշոցքի սարահարթը կամ Արփի լիճը / Պադակն բնակավայրը/:
- ❖ Թվարկել ՀՀ կլիմայի վրա ազդող գործոնները:
- ❖ Բացատրել ջերմաստիճանային շրջադասությունը(ինվերսիա):

Թեմատիկ պլան

Տարվա կլիմայական եղանակները: Կլիմայի վերընթաց գոտիականություն
հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

- 1.Տարվա ո՞ր եղանակներն են դիտվում ՀՀ-ում :
- 2.Որո՞նք են ՀՀ ամենատաք և ամենացուրտ ամիսները :
- 3.Որտե՞ղ են ՀՀ-ում թափվում ամենաշատ տեղումները :
- 4.Որո՞նք են ՀՀ կլիմայի վերընթաց 8 գոտիները:
- 5.Ո՞ր կլիմայական գոտու սահմանում է գտնվում ձեր բնակավայրը:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ ՀՀ-ում դիտվում է տարվա չորս եղանակները:
- ❖ Ամենացուրտ ամիսը՝ հունվարն է, իսկ ամենատաք ամիսը՝ հուլիսն է:
- ❖ Ամենաշատ տեղումները թափվում են Արագածի գագաթին :
- ❖ ՀՀ-ում կլիմայի վերընթաց գոտիներն են՝ չոր մերձարևադարձային, չոր խիստ ցամաքային, չոր ցամաքային, չափավոր ցամաքային, չափավոր շոգ, բարեխառն լեռնային, ցուրտ լեռնային, ձյունամերձ լեռնային:
- ❖ Բնութագրելիք բնակավայրի կլիման:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Թվարկել ՀՀ-ում տարվա եղանակները:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ Արագած լեռը:
- ❖ Թվարկել ՀՀ-ում կլիմայի 8 գոտիները:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ իր բնակավայրը:

Թեմատիկ պլան

Ջրագրությունը:Գետերը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

- 1.Որո՞նք են ՀՀ գլխավոր գետերը :
- 2.Ո՞ր գետն է սկիզբ առնում Սևանա լճից :
- 3.Ո՞րն է ՀՀ -ի ամենաերկար գետը:
- 4.Որո՞նք են ՀՀ գետերի հիմնական հատկանիշները:
5. Ո՞ր գետերի ազավազաններին են պատկանում ՀՀ գետերը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ Գլխավոր գետերն են՝ Ախուրյանը, Աղստը,Արփան, Որոտանը, Դեբեդը:
- ❖ Սևանա լճից սկիզբ է առնում Հրազդան գետը:
- ❖ ՀՀ-ի ամենաերկար գետը Ախուրյանն է / 186 կմ/:
- ❖ ՀՀ գետերի հիմնական հատկանիշներն են՝ լեռնային, սահանքավոր, ունեն մեծ թեքություն, անկում, արագություն, նավարկելի չեն, ունեն էներգետիկ ռեսուրսներ, ոռոգչական նշանակություն, թույլ հանքայնացում, սնվում են ձնհալքի , անձրևային և ստորգետնյա ջրերով,ունեն անհավասարաչափ բաշխում:
- ❖ ՀՀ գետերը պատկանում են Արաքսի և Կուրի ավազաններին /76%-24%/ :

առարկայի կարողանա չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է

- ❖ Քարտեզի վրա ցույց տալ ՀՀ-ի վերոհիշյալ գետերը :
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ Հրազդան գետը:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ Ախուրյան գետը:
- ❖ Բնութագրել ՀՀ գետերը:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ Կուրի և Արաքսի ջրհավաք ավազանների ջրբաժան գիծը:

Թեմատիկ պլան

Զրագրությունը: Լճերը:Սևանալիճ

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1.Որո՞նք են ՀՀ տարածքի նշանավոր լճերը:

2.Ո՞րն է ՀՀ –ում ամենամեծ լիճը:

3.Ո՞րն է ՀՀ ամենամեծ ջրամբարը:

4.Ի՞նչ ծագման լճեր կան ՀՀ-ում:

5.Ի՞նչ նպատակով են օգտագործվում ՀՀ լճերը, ջրամբարները, արտեզյան ավազանները առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

❖ ՀՀ–ում նշանավոր լճերն են Արփի լիճը, Քարի լիճը, Պարզ լիճը:

❖ ՀՀ–ում ամենամեծը Սևանա լիճն է:

❖ ՀՀ–ում ամենամեծ ջրամբարը Ախուրյանն է:

❖ Ըստ ծագման լճերը լինում են՝ տեկտոնական, տեկտոնահրաբխային, սառցադաշտային, փլվածքային, խառնարանային:

❖ ՀՀ–ում քաղցրահամ ջրերը օգտագործվում են արդյունաբերական, էներգետիկ, ոռոգման, կենցաղային և ռեկրեացիոն նպատակներով:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

❖ Քարտեզի վրա ցույց տալ նշանավոր լճերը:

❖ Քարտեզի վրա ցույց տալ Սևանա լիճը:

❖ Քարտեզի վրա ցույց տալ Ախուրյանի ջրամբարը :

❖ Թվարկել լճերը ըստ ծագման:

❖ Նշել ՀՀ արտեզյան ավազանները և ջրամբարները:

Թեմատիկ պլան

Հողային ծածկույթը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր հողային տիպն է տարածված ՀՀ-ում :
2. Ո՞ր հողային տիպն է հումուսով հարուստ:
3. Ո՞րն է Ձեր բնակավայրում տարածված հողային տիպը:
4. Որո՞նք են ՀՀ հողերի բազմազանությանը նպաստող գործոնները:
5. Որո՞նք են ՀՀ հողերի տիպերը:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ ՀՀ-ում տարածված հողային տիպը՝ սևահողերն են:
- ❖ Հումուսով հարուստ են սևահողերը :
- ❖ Ձեր բնակավայրի հողատիպը :
- ❖ Հողերի բազմազանության նպաստող գործոններն են տարաբնույթ ապարները, կլիմայական պայմանները, բուսականությունը, տեղանքի ռելիեֆը:
- ❖ Հողային տիպերն են՝ լեռնային գորշ կիսաանապատային, լեռնաշագանակագույն, լեռնային սևահողեր, լեռնաանտառային գորշ և դարչնագույն, մարգագետնատափաստանային, լեռնամարգագետնային:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Ցույց տալ սևահողերի տարածման շրջանները:
- ❖ Բնութագրել իր բնակավայրի հողային տիպը:
- ❖ Թվարկել հողերի բազմազանությանը նպաստող գործոնները:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ մեծ տարածում ունեցող հողերի տիպերը:

Թեմատիկ պլան

Բուսականությունը: Կենդանական աշխարհը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ բույսեր և կենդանիներ են հանդիպում մեր բնակավայրում :

2. Որո՞նք են ՀՀ ամենատարածված բուսատեսակները:

3. Որո՞նք են ՀՀ ամենատարածված կենդանատեսակները :

4. Ի՞նչ գործոններով է պայմանավորված ՀՀ բուսական և կենդանական տեսակների բազմազանությունը:

5. Որո՞նք են ՀՀ բուսականության վերընթաց գոտիները:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ Հանդիպում են թռչուններ, կրծողներ, սողուններ և անտառային գիշատիչներ :
- ❖ Ամենատարածված բուսատեսակներից են՝ մասրենին, օշինդրը, հաճարենին, կաղնիին:
- ❖ Ամենատարածված կենդանատեսակներից են բեզոարյան այծը, հայական վայրի ոչխարը, իծը, կարիճը, աղվեսը, գայլը, արջը, վարազը և այլն:
- ❖ ՀՀ բուսական և կենդանական տեսակների բազմազանությունը պայմանավորված է նրա աշխարհագրական դիրքով /այն գտնվում է Կովկասյան և Արևելամիջերկրածովային բուսաբանական մարզերի շփման գոտում/ ինչպես նաև վերընթաց գոտիականությամբ:
- ❖ ՀՀ բուսականության վերընթաց գոտիներն են՝ անապատային և կիսաանապատային, լեռնային չորասեր(լեռնային ֆրիգանոիդ), լեռնատափաստանային, անտառային(հյուսիսարևելյան և հարավարևելյան), մերձալպյան և ալպյան:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Թվարկել վայրի կենդանատեսակները :
- ❖ Տարբերակել բուսատեսակները :
- ❖ Թվարկել իր բնակավայրի կենդանատեսակներն ու բույսերը :
- ❖ Ներկայացնել ՀՀ բուսական և կենդանական տեսակների բազմազանության պատճառները:
- ❖ Թվարկել ՀՀ բուսականության վերընթաց գոտիները:

Թեմատիկ պլան

Լանդշաֆտները: Վերընթաց գոտիականություն

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ է Լանդշաֆտը:

2. Ո՞ր Լանդշաֆտն էամենատարածվածըՀՀ-ում:

3. Ո՞րն էիրբնակավայրի Լանդշաֆտը :

4. Որո՞նք են Լանդշաֆտային գոտիականության առաջացման պատճառները:

5. Որո՞նք են վերընթաց Լանդշաֆտային գոտիները :

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ Լանդշաֆտը բնական տարածք է, որը ունի իրեն բնորոշ հողեր, բույսեր և կենդանական աշխարհ:
- ❖ ՀՀ ում տարածված է Լեռնատափաստանային Լանդշաֆտը:
- ❖ Ներկայացնել իր բնակավայրի Լանդշաֆտը :
- ❖ Լանդշաֆտների գոտիականության առաջացման գլխավոր պատճառներն են՝ ջերմության և խոնավության փոփոխությունը ըստ բարձրության:
- ❖ Վերընթաց Լանդշաֆտային գոտիներն են՝ անապատակիսաանապատային, կիսաանապատային, Լեռնատափաստանային(չոր Լեռնատափաստանային, սևահողային տափաստանային), Լեռնանտառային, մերձալպյան ու ալպյան և ձյունամերձ:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Բացատրել «Լանդշաֆտ» հասկացությունը:
Քարտեզի վրա ցույց տալ Լեռնատափաստանային Լանդշաֆտի տարածման շրջանները :
- ❖
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ իր բնակավայրը :
- ❖ Հիմնավորել վերընթաց գոտիականության առաջացման պատճառները:
- ❖ Թվարկել Լանդշաֆտային գոտիները:

Թեմատիկ պլան

Բնօգտագործման և բնապահպանության խնդիրները

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ինչպիսի գործոնների ազդեցությամբ են առաջանում բնապահպանական խնդիրները:
2. Ինչու է ՀՀ-ում կարևորվում անտառների պահպանությունը:
3. Որո՞նք են օդային ու ջրային ավազանների ու հողերի աղտոտման աղբյուրները:
4. Որո՞նք են ձեր բնակավայրի օդային, ջրային և հողերի աղտոտման աղբյուրները:
5. Ինչպե՞ս կարելի է պայքարել բնական միջավայրի աղտոտման դեմ:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ Բնապահպանական խնդիրներ առաջանում են մարդածին և բնածին գործոնների ազդեցությամբ:
- ❖ Անտառների շարունակվող կրճատումը առաջացնում է տարաբնույթ էկոլոգիական խնդիրներ:
- ❖ Օդային և ջրային ավազանները աղտոտող աղբյուրներն են ավտոմոբիլային տրանսպորտի արտանետումները, պղնձաձուլությա ն հոսքաջրերը, կենցաղային թափոնները :
- ❖ Նկարագրել մերբնակավայրի աղտոտման աղբյուրները:
- ❖ Նվազեցնել թափոնների քանակը, խոտհարքերի և արոտավայրերի արդյունավետ օգտագործումը, ավտոմոբիլային տրանսպորտի արտանետումների կրճատումը, հակահրդեհային կանոնների պահպանումը, երկրագործության մեջ ազրոտեխնիկայի ճիշտ կիրառումը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Քարտեզի վրա ցույց տալ ՀՀ-ում անտառների տարածման վայրերը :
- ❖ Թվարկել օդային ու ջրային ավազանների ու հողերի աղտոտման աղբյուրները:
- ❖ Թվարկել մեր բնակավայրի աղտոտման աղբյուրները :
- ❖ Թվարկել ՀՀ-ում իրականացվող բնապահպանական միջոցառումները:

Թեմատիկ պլան

Հատուկ պահպանվող տարածքները: ՀՀ «Կարմիր գրքերը»

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Հատուկ պահպանվող տարածքների ի՞նչ տեսակներ գիտեք:

2. Ի՞նչ է արգելոցը

3. Ի՞նչ են իրենցից ներկայացնում «Կարմիր գրքերը»:

4. Որո՞նք են բնության հուշարձանները Հայաստանում:

5. Որո՞նք են ազգային պարկերը և արգելավայրերը:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ ՀՀ Հատուկ պահպանվող տարածքների տեսակներն են՝ արգելոցներ, արգելավայրեր, ազգային պարկեր, բնական հուշարձանները:
- ❖ Արգելոցը հատուկ պահպանվող տարածք է, որտեղ արգելվում է մարդու տնտեսական գործունեությունը :
- ❖ Կարմիր գրքերը տեղեկություններ են տալիս անհետացած և չհայտնաբերված վտանգի տակ գտնվող բուսատեսակների և կենդանատեսակների պահպանման մասին:
- ❖ ՀՀ Բնության հուշարձաններն են՝ ջրվեժները (Ջերմուկի, Շաքիի, Թոչկանի), քարանձավները (Մոզրովի, Մագիլի), Սատանի կամուրջը:
- ❖ ՀՀ Ազգային պարկերն են՝ Սևանի, Դիլիջանի, Արփի լճի, Արևիկ, իսկ արգելավայրերը 25-ից ավելի:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Թվարկել ՀՀ հատուկ պահպանվող տարածքները:
- ❖ Թվարկել ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանատեսակները :
- ❖ Թվարկել ՀՀ «Կարմիր գրքի» տեսակները:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ թվարկված հուշարձանները:
- ❖ Թվարկել ազգային պարկերը:

Թեմայի ամփոփում

Հայաստանի Հանրապետության բնակչությունը

Թեմատիկ պլան

Ընդհանուր ակնարկ: Թվաքանակի շարժընթացը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որքա՞ն է ՀՀ բնակչության թվաքանակը:

2. Որքա՞ն է ՀՀ բնակչության միջին խտությունը:

3. Ըստ բնակչության թվաքանակի Հայաստանի Հանրապետությունը ինչպիսի՞ պետություն է համարվում:

4. Ինչպե՞ս է փոփոխվել ՀՀ բնակչության թիվը XIXդ.-XXդ. վերջ ընկած ժամանակահատվածում:

5. Ի՞նչ գործոններ են ազդել բնակչության թվի փոփոխության վրա:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ ՀՀ բնակչության թիվը կազմում է մոտ 3 մլն մարդ :
- ❖ ՀՀ բնակչության միջին խտությունը 105մարդ/ քառ.կմ :
- ❖ ՀՀ-ն դասվում է բնակչության թվով փոքր պետությունների շարքին:
- ❖ 1918թ. բնակչության թիվը մոտեցել է 1,3մլն.-ի, 1920-1989թթ բնակչության կայուն աճը վերականգնվել է 3,3մլն.-ի:
- ❖ Բնակչության թվի փոփոխության վրա ազդել են պատերազմները, համաճարակները, ներգաղթը, արտագաղթը, տնտեսության կայուն զարգացումը:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Նշել ՀՀ բնակչության թիվը:
- ❖ Նշել ՀՀ բնակչության միջին խտությունը:
- ❖ Նշել հայերի թվաքանակը աշխարհում:
- ❖ Ներկայացնել բնակչության թվի փոփոխությունները ըստ ժամանակաշրջանների:
- ❖ Թվարկել ներգաղթի և արտագաղթի ուղղությունները, տնտեսության զարգացմանը նպաստող գործոնները:

Թեմատիկ պլան

Բնակչության թվի բնական և մեխանիկական շարժընթացը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր ցուցանիշն է պատկերացում տալիս Հայաստանի Հանրապետության բնակչության ն թվի բնական շարժի մասին:

2. Որքա՞ն է ՀՀ ներկայիս բնական աճը և ի՞նչ ցուցանիշներով է այն ձևավորվում:

3. Մեխանիկական շարժի ի՞նչ տարատեսակներ գիտեք:

4. Որո՞նք են ՀՀ ուղղված ներգաղթի ալիքները :

5. ՀՀ բնակչության թվի աճի համար մոտակա տարիներին ինչպիսի՞ պայմաններ և նախադրյալներ են անհրաժեշտ:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

❖ ՀՀ բնակչության թվի փոփոխությունը կախված է բնական և մեխանիկական շարժերից :

❖ Ներկայիս բնական աճը 0,3-

0,5%, այն ձևավորվում է ծնվածների և մահացածների թվերի տարբերությամբ:

❖ Մեխանիկական շարժի տարատեսակներն են ներգաղթը և արտագաղթը:

❖ **Ներգաղթի ալիքներն են՝ Վրաստանից (անհասներ, առանձին ընտանիքներ), Ադրբեջանից,**

պետականորեն կազմակերպված զանգվածային հայրենադարձություն, 1988-1990 թթ. Ադրբեջանից բռնի ներգաղթ Հայաստան:

❖ **ՀՀ բնակչության աճի համար անհրաժեշտ պայմաններ կարող են հանդիսանալ՝ տնտեսության աճը, երկրի կայուն աճումը, աշխատատեղերի ստեղծումը, աղքատության վերացումը:**

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

❖ Տարբերել բնական և մեխանիկական շարժերը:

❖ Սահմանել բնական աճը:

❖ Բացատրել արտագաղթի պատճառները:

❖ **Թվարկել ներգաղթի ուղղությունները:**

❖ **Թվարկել բնակչության թվի աճի նպաստող գործոնները:**

Թեմատիկ պլան

Բնակչության կազմը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ըստ բնակչության ազգային կազմի ինչպիսի՞ երկիր է ՀՀ-ն:
2. Ինչպիսի՞ն է ՀՀ բնակչության տարիքային կառուցվածքը:
3. Ինչպիսի՞ն է բնակչության կազմը ըստ բնակավայրերի տիպերի:
4. Ի՞նչ ազգային փոքրամասնություններ են բնակվում ՀՀ-ում:
5. Ի՞նչ կրոններն առավանտավանդվում են:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ ՀՀ ազգային կազմը միատարր է :
- ❖ Սեռային կազմում գերակշռում են կանայք:
Ըստ տարիքային խմբերի բաժանվում է՝ մինչ աշխատունակ/երեխաներ/, աշխատունակ/չափահասներ/ և հետաշխատունակ/թոշակային/ տարիք:
- ❖ Ըստ բնակավայրերի տիպի առանձնացվում են քաղաքներ և գյուղեր:
- ❖ Ազգային փոքրամասնություններից են՝ եզդիները/թվաքանակով երկրորդ ազգն է ՀՀ-ում/, ռուսները, ասորիները, հույները, ուկրաինացիները:
- ❖ Հայերը դավանում են քրիստոնեություն, Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ են:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Ներկայացնել ՀՀ բնակչության տարիքային խմբերը:
- ❖ Նշել ՀՀ բնակչության սեռային կազմը :
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ ՀՀ խոշոր քաղաքները:
- ❖ Թվարկել ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունները և նրանց բնակեցման վայրերը:
- ❖ Ներկայացնել ՀՀ կրոնականությունը:

Թեմատիկ պլան

Աշխատանքային ռեսուրսները

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ինչ է աշխատանքային ռեսուրսը:

2. Ինչ է տնտեսապես ակտիվ բնակչությունը:

3. Որտե՞ղ են կենտրոնացված ՀՀ աշխատանքային ռեսուրսները:

4. Ինչպիսի՞ն է ՀՀ բնակչության սոցիալական կազմը:

5. Ինչո՞վ է պայմանավորված աշխատանքային ռեսուրսների քանակը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ Աշխատանքային ռեսուրսը բնակչության այն խումբն է, ովքեր իրենց մտավոր և ֆիզիկական կարողություններով ունակ են աշխատելու տնտեսության որևէ բնագավառում:
- ❖ Բնակչության այն խումբը, որն ունի սեփական եկամուտ կոչվում է տնտեսապես ակտիվ բնակչություն: Դրանք բոլոր աշխատողները և աշխատանք փնտրողներն են:
- ❖ ՀՀ աշխատանքային ռեսուրսները կենտրոնացված են հիմնականում Երևանում:
- ❖ Բնակչության սոցիալական խմբերն են՝ սեփականատերեր(պետական, մասնավոր, կոլեկտիվ), բանկիրներ, խոշոր ձեռնարկատերեր, ֆերմերներ, վարձու աշխատողներ և այլն:
- ❖ Աշխատանքային ռեսուրսների քանակը պայմանավորված է բնակչության ընդհանուր թվով, տարիքային կազմով:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Տարբերակել ընդհանուր բնակչության մեջ աշխատունակ տարիքը:
- ❖ Տարբերակել թոշակային տարիքը՝ 63 տարեկան:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ Երևանը:
- ❖ Թվարկել բնակչության սոցիալական խմբերը:
- ❖ Նշել աշխատանքային ռեսուրսների ցուցանիշը բնակչության ընդհանուր թվաքանակում:

Թեմատիկ պլան

Բնակչության տեղաբաշխումը: Տարաբնակեցումը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր ցուցանիշն է ցույց տալիս բնակչության տեղաբաշխման պատկերը:

2. Բնակավայրերի ի՞նչ տեսակներ գիտեք:

3. Քանի՞ քաղաքային բնակավայր կա ՀՀ-ում:

4. Ինչպիսի՞ն է բնակչության տեղաբաշխումը ըստ վերընթաց գոտիների:

5. Ինչպիսի՞ն է ՀՀ գյուղական տարաբնակեցումը:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ Բնակչության տեղաբաշխման պատկերը արտահայտվում է բնակչության միջին խտության ցուցանիշով:
- ❖ ՀՀ բնակավայրերի տեսակներն են քաղաքներն ու գյուղերը:
- ❖ ՀՀ –ում կա 49 քաղաքային բնակավայր:
- ❖ Ըստ բարձրության բնակչության թիվը նվազում է : Առանձնացվում են բնակչության տեղաբաշխման հինգ վերընթաց գոտիներ: Առաջին գոտին մինչև 1000մ բարձրություններն են, որտեղ բնակվում են ՀՀ բնակչության կեսից ավելին: Երկրորդը՝ 1000-1500մ, 3-րդը՝ 1500-2000մ, 4-րդ և 5-րդ գոտիները 2500մ և ավելի :
- ❖ Լեռնային տարածքներին բնորոշ են գծային տարաբնակեցումը, իսկ հարթ տարածքներին բնորոշ են համատարած և ցրված տարաբնակեցումը:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Քարտեզի վրա ցույց տալ ամենախիտ բնակեցված մարզերը՝ Արարատը և Արմավ իրը:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ ամենանոսր բնակեցված մարզերը՝ Վայոց Ձորը և Սյուն իքը :
- ❖ Նշել իր բնակավայրի տիպը:
- ❖ Թվարկել բնակչության տեղաբաշխումը ըստ վերընթաց գոտիների:
- ❖ Նշել ՀՀ քաղաքային բնակավայրերը:

Թեմատիկ պլան

Խոշոր քաղաքները

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է ՀՀ-ի միլիոնանոց քաղաքը:

2. Որո՞նք են ՀՀ խոշոր քաղաքները :

3. Որոնք են ՀՀ մարզային կենտրոնները:

4. **Ըստ աշխարհագրական նշանակության(աշխատանքի աշխարհագրական բաժանում) ինչպիսի՞ քաղաքներ կան Հայաստանում :**

5. **Ինչպիսի՞ գործառույթային բնութագրեր ունեն Վանաձոր և Գյումրի քաղաքները:**

առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

❖ ՀՀ-ում միլիոնանոց քաղաքը Երևանն է:

❖ ՀՀ-ի խոշոր քաղաքներն են՝ Գյումրին, Վանաձորը, Վաղարշապատը, Կապանը, Հրազդանը:

❖ ՀՀ մարզկենտրոններն են՝ Արմավիրը, Գյումրին, Վանաձորը, Իջևանը, Գավառը, Աշտարակը, Արարատը, Եղեգնաձորը, Կապանը և Հրազդանը:

❖ **Ըստ աշխարհագրական նշանակության ՀՀ-ում քաղաքները լինում են համապետական, մարզային, տեղական նշանակության քաղաքներ :**

Գյումրին արվեստի, արհեստի, սպորտի, մշակութային և տեքստիլ արդյունաբերության կենտրոն է: Համարվում է նաև երկաթուղային հանգույց:

Վանաձորը քիմիական արդյունաբերության կենտրոն է, ունի ջերմաէլեկտրակայաններ,

❖ **առողջարանային և ռեկրեացիոն նշանակության կենտրոններ:**

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

❖ Քարտեզի վրա ցույց տալ Երևանը, Գյումրի, Վանաձոր քաղաքները:

❖ Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ ՀՀ խոշոր քաղաքները:

❖ Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ ՀՀ մարզերն ու մարզկենտրոնները:

❖ **Թվարկել Հայաստանի աշխարհագրական նշանակության(աշխատանքի աշխարհագրական բաժանում) քաղաքները:**

❖ **Ներկայացնել Գյումրի և Վանաձոր քաղաքների գործառույթային նշանակությունը:**

Թեմատիկ պլան

Մայրաքաղաք Երևան

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է ՀՀ համապետական կենտրոնը:
2. Ո՞վ է Երևանի գլխավոր հատակագծի հեղինակը:
3. Ի՞նչ գործառույթներ է կատարում Երևանը:
4. Որո՞նք են Երևանի գիտական, կրթական, ֆինանսական, մշակութային կենտրոնները /Թվարկել մի քանիսը/:
5. Քանի սն են Երևանի վարչական շրջանները /նշել մի քանիսը/:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ ՀՀ մայրաքաղաքը Երևանն է:
- ❖ Երևանի գլխավոր հատակագծի հեղինակը Ալեքսանդր Թամանյանն է:
- ❖ Երևանը կատարում է մի շարք քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական Ֆինանսական, գիտական գործառույթներ:
- ❖ Երևանի գիտակրթական և մշակութային կենտրոններից են՝ Գիտությունների ազգային ակադեմիան, Պետական համալսարանը, Կենտրոնական բանկը, Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը:
- ❖ Երևանի վարչական շրջանները 12 են՝ Կենտրոն, Արաբկիր, Ավան Առինջ, Էրեբունի, Դավիթաշեն, Նոր Նորք, Աջափնյակ, Ջեյթուն, Մալաթիա, Սեբաստիա, Նորք Մարաշ, Նուբարաշեն:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Նշել ՀՀ-ի համապետական կենտրոնը:
- ❖ Նշել Երևանի գլխավոր հատակագծի հեղինակի անունը :
- ❖ Թվարկել մի քանի կրթամշակութային կենտրոններ:
- ❖ Թվարկել Երևան քաղաքի գործառույթները:
- ❖ Թվարկել 12 վարչական շրջանները:

Թեմայի ամփոփում

Թեմատիկ պլան

ՀՀ տնտեսությունը :Ընդհանուր բնութագիրը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1.Որո՞նք են նախախորհրդային Հայաստանի տնտեսության մասնագիտացված ճյուղերը:

2.Ինչպիսի՞ երկիր է ՀՀ-ն տնտեսության կառուցվածքով:

3.Ո՞րն է ՀՀ տնտեսության առաջատար ճյուղը:

4.Որո՞նք են ՀՀ տնտեսության առանձնահատկությունները:

5.Ինչպիսի՞ ցուցանիշներ են օգտագործվում երկրների տնտեսական զարգացման մակարդակները որոշելու համար:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ Նախախորհրդային Հայաստանը զարգացած էր պղնձաձուլությամբ, գինու–կոնյակի արտադրությամբ, բամբակագործությամբ և պտղաբուծությամբ:
- ❖ ՀՀ-ն տնտեսության կառուցվածքով ինդուստրիալ–ագրարային երկիր է:
- ❖ ՀՀ տնտեսության առաջատար ճյուղը արդյունաբերությունն է:
- ❖ ՀՀ տնտեսության առանձնահատկություններն են բազմաճյուղայնությունը , էներգակիրների կախվածությունը արտաքին շուկայից և ներքին միջշրջանային տնտեսական կապերի առկայությունը:
- ❖ Երկրների տնտեսական զարգացման մակարդակը գնահատվում է բացարձակ /ՀՆԱ ծավալ,արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքների և մատուցվող ծառայությունների ծավալներ/ և հարաբերական ցուցանիշներով /ՀՆԱ մեկ շնչի հաշվով/:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Թվարկել նախախորհրդային Հայաստանի մասնագիտացված ճյուղերը:
- ❖ Ներկայացնել ՀՀ տնտեսության կառուցվածքը:
- ❖ Ներկայացնել ՀՀ տնտեսության առաջատար ճյուղը:
- ❖ Թվարկել տնտեսության զարգացման առանձնահատկությունները:
- ❖ Թվարկել երկրի տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշները:

Թեմատիկ պլան

ՀՀ արդյունաբերությունը: Ընդհանուր բնութագիրը: Զյուղային կառուցվածքը հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Արդյունաբերության ո՞ր ճյուղերի ծավալն է մեծ արդյունաբերության ճյուղային ընդհանուր կառուցվածքում:

2. Որո՞նք են ՀՀ արդյունաբերական հանգույցները:

3. Ո՞ր բնական ռեսուրսների ներկրումից է կախված ՀՀ տնտեսական զարգացումը:

4. Ինչպիսի՞ն է արդյունաբերական կառուցվածքը ըստ վարչական մարզերի:

5. Որո՞նք են ՀՀ արդյունաբերության գլխավոր ճյուղերը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ Արդյունաբերության ճյուղային ընդհանուր կառուցվածքում մեծ է հանքարդյունաբերության, սննդի արդյունաբերության բաժինները:
- ❖ ՀՀ-ում ձևավորված են վեց արդյունաբերական հանգույցներ՝ Երևանի, Գյումրու, Վանաձորի, Հրազդանի, Ալավերդու, Կապան-Քաջարանի:
- ❖ ՀՀ տնտեսական զարգացումը կախված է բնական գազի, նավթամթերքների, կիսաֆաբրիկատների ներկրումից:
- ❖ Ըստ վարչական մարզերի արդյունաբերության արտադրանքի ծավալի 40% բաժին է ընկնում Երևանին, իսկ Տավուշինը՝ 0,7%, 2-րդ տեղում՝ Սյունիքն է՝ 17%:
- ❖ ՀՀ արդյունաբերության գլխավոր ճյուղերն են գունավոր մետալուրգիան, մեքենաշինությունը, շինանյութերի, ապակու-հախճապակու արտադրությունը, թեթև - սննդի արդյունաբերությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, էլեկտրաէներգետիկան:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Թվարկել արդյունաբերության ճյուղերը:
- ❖ Թվարկել արդյունաբերական հանգույցները:
- ❖ Թվարկել ներկրվող ապրանքատեսակները :
- ❖ Ներկայացնել արդյունաբերական արտադրանքի ծավալը ստամարզերի:
- ❖ Թվարկել ՀՀ արդյունաբերության գլխավոր ճյուղերը:

Թեմատիկ պլան

Վառելիքաէներգետիկ համալիրը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են ՀՀ էլեկտրակայանների գլխավոր տեսակները :

2. ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում էներգետիկայի ո՞ր ոլորտն է առաջատարը:

3. Ո՞ր է ՀՀ ատոմային էլեկտրակայանը :

4. Որո՞նք են ՀՀ այլընտրանքային էներգիայի աղբյուրները:

5. Որո՞նք են ՀՀ առավել հզոր էլեկտրակայանները:

առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ ՀՀ էլեկտրակայանների գլխավոր տեսակներն են՝ Ջէկ, Ջրէկ, Աէկ, Հողմային:
- ❖ ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում առաջատարը ջերմային էներգետիկան է (Երևանի, Հրազդանի, Վանաձորի):
- ❖ ՀՀ ատոմային էլեկտրակայանը Մեծամորի ատոմակայանն է:
- ❖ ՀՀ-ում այլընտրանքային էներգիայի աղբյուրներն են քամու, արևի, երկրի ընդերքի էներգիան:
- ❖ ՀՀ առավել հզոր էլեկտրակայաններն են Հրազդանի ջէկը, Մեծամորի աէկը, Երևանի ջէկը, Արգելի ջրէկը, Տաթևի ջրէկը, Շամբի ջրէկը, Քանաքառեի ջրէկը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Թվարկել ՀՀ ավանդական էլեկտրակայանները:
- ❖ Թվարկել ՀՀ ջէկ-երը :
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ ՀՀ աէկի գտնվելու վայրը:
- ❖ Թվարկել ՀՀ այլընտրանքային էներգիայի աղբյուրները:
- ❖ Թվարկել ՀՀ առավել հզոր էլեկտրակայանները:

Թեմատիկ պլան

Մետալուրգիական արդյունաբերությունը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ինչու՞ է մետաղաձուլությունը Հայաստանում համարվում տնտեսության հին ճյուղ:
2. Ի՞նչ ենթաձյուղերից է բաղկացած ՀՀ մետալուրգիական համալիրը:
3. Որտե՞ղ են տեղաբաշխված են ՀՀ մետաղաձուլական գործարանները:
4. Ինչպիսի՞ն է արտադրական ցիկլունի ոսկու արդյունաբերության ենթաձյուղը ՀՀ-ում, և որտե՞ղ է այն վերամշակվում:
5. Էկոլոգիական ինչպիսի՞ թափոններ են առաջանում մետաղաձուլությունից :
առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ Ք.ա 4-րդ հազարամյակից ՀՀ-ում զբաղվել են մետաղաձուլությամբ՝ ունենալով զգալի պաշարներ:
- ❖ ՀՀ մետալուրգիական համալիրը բաղկացած է՝ պղնձի, մոլիբդենի, ոսկու, ալյումինի և բազմամետաղների ենթաձյուղերից:
- ❖ ՀՀ մետաղաձուլական գործարանները գտնվում են կան Ալավերդիում, Ջանգեզուրում, Արարատում:
- ❖ Ոսկու արդյունաբերության ենթաձյուղը ունի լրիվ արտադրական ցիկլ և տեղաբաշխված է Մոտքի և Մեղրաձորի ոսկու հանքավայրերում: Հումքը վերամշակվում է Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում:
- ❖ Հանքավայրերի մոտ առաջանում են պոչամբարներ, ինչպես նաև թունավոր գազերի արտանետումներ մթնոլորտ(ծծմբի երկօքսիդ), որից առաջանում են թթվային անձրևներ:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Բացատրել Հայաստանում մետաղաձուլության հին ճյուղի առկայությունը :
- ❖ Թվարկել ՀՀ մետալուրգիական համալիրի ենթաձյուղերը :
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ Ալավերդին, Ջանգեզուրը, Արարատը :
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ ոսկու հանքավայրերը:
- ❖ Բացատրել էկոլոգիական գործոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Թեմատիկ պլան

Մեքենաշինությունը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են ՀՀ մեքենաշինության գլխավոր ճյուղերը :

2. Որո՞նք են ՀՀ-ում մեքենաշինության կենտրոնները :

3. Ո՞ր նախադրյալը կնպաստի մեքենաշինության հետագա զարգացմանը:

4. Ի՞նչ առանձնահատկություն ունի ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումը:

5. Ինչպիսի՞ն է ճյուղի վիճակը և արդի հիմնախնդիրները շուկայական տնտեսության զարգացման պայմաններում:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ ՀՀ մեքենաշինության գլխավոր ճյուղերն են էլեկտրատեխնիկականը, հաստոցաշինականը, գործիքաշինականը, սարքաշինությունը, ռադիոէլեկտրանային արդյունաբերությունը:
- ❖ ՀՀ-ում մեքենաշինության կենտրոններն են Երևանը, Վանաձորը, Գյումրին, Հրազդանը:
- ❖ Մեքենաշինության հետագա զարգացմանը նպաստում են գիտատեխնիկական առաջընթացը, որակյալ աշխատանքային ռեսուրսները :
- ❖ Մեքենաշինությունը ունի ցրված տեղաբաշխում, հիմնական կենտրոններն են տեղաբաշխված են քաղաքային բնակավայրերը:
- ❖ Ճյուղի հետագա զարգացումը պահանջում է լուրջ կառուցվածքային վերափոխումներ, շուկայի պահանջները էլնելով՝ հանվում են մի շարք հին արտադրատեսակներ, դրվում են նորերը, ինչպես նաև սպառման շուկայի ընդգրկումը, արտահանման ծավալի ավելացումը:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Թվարկել ՀՀ մեքենաշինության ենթաճյուղերը:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ մեքենաշինության կենտրոնները:
- ❖ Նշել աշխատանքային ռեսուրսներով կենտրոնացված բնակավայրերը:
- ❖ Ներկայացնել մեքենաշինության տեղաբաշխումը:
- ❖ Բնութագրել մեքենաշինության արդի հիմնախնդիրները:

Թեմատիկ պլան

Քիմիական արդյունաբերությունը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1.Ի՞նչ ռեսուրսներ կան քիմիական արդյունաբերության զարգացման համար:

2.Ի՞նչ նախադրյալներ կան Հայաստանում քիմիական արդյունաբերության բազմակողմանի և արագ զարգացման համար:

3.Ի՞նչ արտադրատեսակներ է թողարկում քիմիական արդյունաբերությունը:

4.Որո՞նք են քիմիական արդյունաբերության ենթաճյուղերը:

5.Որո՞նք են քիմիական արդյունաբերության կենտրոնները:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ Քիմիական արդյունաբերության զարգացման համար հումք է հանդիսանում բնական կրաքարը, կերակրի աղը, գունավոր մետաղաձուլության ծծմբային թափոնները:
- ❖ Քիմիական արդյունաբերության զարգացման համար նախադրյալներ են հանդիսացել որակյալ քիմիկոս կադրերը, բնական գազի առկայությունը:
- ❖ Քիմիական արդյունաբերությունը թողարկում է սինթետիկ կաուչուկ, ազոտական պարարտանյութեր, ներկեր, լաքեր, դեղեր :
- ❖ Քիմիական արդյունաբերության ենթաճյուղերն են սինթետիկ կաուչուկի և այլ քիմիական միացությունների արտադրական համալիրը, ազոտային պարարտանյութերի և ազոտական այլ միացությունների համալիրը, գունավոր մետալուրգիայի արտադրական թափոնների օգտագործման համալիրը, քիմիական կենցաղային իրերի արտադրության համալիրը, փոքր քիմիան:
- ❖ Քիմիական արդյունաբերության կենտրոններն են Վանաձորը, Վաղարշապատը, Ալավերդին, Երևանը:

առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Թվարկել հանքավայրերը՝ Արարատը, Երևանի աղի հանքը:
- ❖ Նշել քիմիայի զարգացման հենքը:
- ❖ Թվարկել քիմիական արդյունաբերության արտադրատեսակները:
- ❖ Թվարկել քիմիական արդյունաբերության ենթաճյուղերը :
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ քիմիական արդյունաբերության կենտրոնները:

Թեթև արդյունաբերությունը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Հումքի ի՞նչ տեսակներն են օգտագործվում թեթև արդյունաբերության մեջ:
2. Որո՞նք են թեթև արդյունաբերության ենթաճյուղերը:
3. Որտե՞ղ է գտնվում ՀՀ գորգերի մեքենայացված արտադրությունը:
4. Ինչպիսի՞ տեղերգրադեցրել թեթևարդյունաբերությանճյուղըխորհրդայինտարիներին: Եվ ի՞նչ արտադրատեսակներ են թողարկվել:
5. Ինչպիսի՞ փոփոխություններ է կրել թեթև արդյունաբերությունը հետխորհրդային տարիներին:

առարկայի չափորոշչային նվազագույն միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ Թեթև արդյունաբերության մեջօգտագործվում են կաշի, բուրդ, բամբակ, մետաքս, որոնք հիմնականում ներկրվում են դրսից:
- ❖ Թեթև արդյունաբերության ենթաճյուղերն են տեքստիլ, տրիկոտաժի, կաշվի-կոշիկի, կարի, գորգերի արտադրությունը :
- ❖ ՀՀ գորգերի մեքենայացված արտադրությունը իրականացվում է Իջևանի գորգագործական կոմբինատում:
- ❖ Թեթև արդյունաբերությունըխորհրդային տարիներին Հայաստանի արդյունաբերական համալիրի երկրորդ ճյուղն էր: Տնտեսական ցուցանիշներով զիջում էր մեքենաշինությանը: Թեթև արդյունաբերական արտադրատեսականերն են՝ ներքնազգեստները, գուլպաները, կոշիկները, գորգերը:
- ❖ Ձեռնարկությունների մեծ մասը ապամոնտաժվել են, ջանքեր են ներդրվում ճյուղը վերականգնելու, արտադրանքը մրցունակ դարձնելու ուղղությամբ:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Թվարկել թեթև արդյունաբերության հումքային բազան:
- ❖ Թվարկել թեթև արդյունաբերության ենթաճյուղերը :
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ Իջևան քաղաքը:
- ❖ Նշել խորհրդային տարիներին թեթև արդյունաբերության տեղն ու դերը տնտեսության մեջ, արտադրատեսակները:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ թեթև արդյունաբերական նախկին և ներկակենտրոնները:

Արդյունաբերության նորագույն ճյուղերը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են ՀՀ արդյունաբերության նորագույն ճյուղերը:
2. Որո՞նք են արդյունաբերության նորագույն ճյուղերի զարգացման նախադրյալները ՀՀ-ում:
3. Որո՞նք են արդյունաբերության նորագույն ճյուղերի գործունեության հիմնական ուղղությունները:
4. **Արդյունաբերության նորագույն ճյուղերի ոլորտում հայտնի ի՞նչ արտադրատեսակներ գիտեք:**
5. **Ինչպիսի՞ արդյունքներ կարող է ապահովել նորագույն ճյուղերի զարգացումը ՀՀ-ում:**

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ ՀՀ արդյունաբերության նորագույն ճյուղերն են լազերային տեխնիկայի արտադրությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները և այլն:
- ❖ ՀՀ-ում արդյունաբերության նորագույն ճյուղերի զարգացման նախադրյալներն են կրթության և գիտության զարգացումը, ոչնյութատարևոչէներգատար , բայցգիտատարևորակյալաշխատանքպահանջողճյուղերիառկայությունը:
- ❖ Արդյունաբերության նորագույն ճյուղերի գործունեության հիմնական ուղղություններն են տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառը:
- ❖ Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերությունների հիմնական մասնագիտացումներն են՝ կիսահաղորդիչների նախագծումը, ծրագրային ապահովման պատվերների իրականացումը, ֆինանսական ծրագրերի մշակումը, մուլտիմեդիա նախագծումը, ինտերնետային ծրագրավորումը, տեղեկատվական համակարգերի մշակումը և այլն:
- ❖ Կարող է ապահովել ՀՀ-ում տնտեսության հզորացումը, նորաշխատատեղերի ստեղծմանը, բնակչության բարեկեցության բարձրացմանը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Թվարկել արդյունաբերության նորագույն ճյուղերի կենտրոնները (Երևանը, Գյումրին, Աշտարակը):
- ❖ Թվարկել արդյունաբերության նորագույն ճյուղերի զարգացման նախադրյալները:
- ❖ Թվարկել արդյունաբերության նորագույն ճյուղերը:
- ❖ Թվարկել ՀՀ ՏՏ ընկերությունների արտադրատեսակները:
- ❖ Վերլուծել ՀՀ-ում արդյունաբերության նորագույն ճյուղերի զարգացման կարևորությունը:

Թեմատիկ պլան

Արդյունաբերության այլ ճյուղերը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են ՀՀ արդյունաբերության օժանդակ և տեղական նշանակության ճյուղերը:
2. Որո՞նք են շինանյութերի արդյունաբերության ենթաճյուղերը :
3. Որո՞նք են ապակու և հախճապակու արտադրատեսակները :
4. Որո՞նք են ՀՀ փայտամշակման արդյունաբերության բնորոշ գծերը:
5. Ի՞նչ գործոններ է նպաստել թանկարժեք քարերի և ոսկերչական իրերի արտադրությունը ՀՀ-ում:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ ՀՀ –ում օժանդակ և տեղական նշանակության ճյուղերն են՝ շինանյութերի, ապակու և հախճապակու, փայտամշակման արդյունաբերությունը:
- ❖ ՀՀ–ում շինանյութերի արդյունաբերության ենթաճյուղերն են՝ բնական շինանյութերի արտադրությունը, կապակցող և մածող նյութերի, բետոնի ու երկաթ–բետոնե իրերի արտադրությունը:
- ❖ ՀՀ–ում ապակու և հախճապակու արտադրատեսակներն են՝ շշեր, ապակե տարաներ, հաղճապակի, ճենապակի, բյուրեղապակի, էլեկտրաջահեր, կենցաղային օգտագործման իրեր :
- ❖ ՀՀ-ում առկա են փայտանյութի տեխնիկական մշակման արտադրական ձեռնարկությունները, բացակայում են փայտաքիմիական և ցելյուլոզի-թղթի արտադրությունները՝ անսառածածկ տարածքների սակավության պատճառով:
- ❖ ՀՀ-ում թանկարժեք քարերի և ոսկերչական իրերի արտադրությանը նպաստել է ոսկու հանքավայրերի և որակյալ ոսկերիչ արհեստավորների առկայությունը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Թվարկել ՀՀ արդյունաբերության օժանդակ և տեղական նշանակության ենթաճյուղերը :
- ❖ Թվարկել շինանյութերի արդյունաբերության ենթաճյուղերը :
- ❖ Թվարկել ապակու և հախճապակու արդյունաբերության արտադրատեսակները:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ փայտամշակման արդյունաբերության կենտրոնները՝ Իջևանը, Ալավերդին, Դիլիջանը:
- ❖ Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ թանկարժեք քարերի և ոսկերչական իրերի արտադրական կենտրոնները՝ Երևանը, Նոր Հաճն:

Թեմատիկ պլան

Գյուղատնտեսության ընդհանուր բնութագիրը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ ենթաճյուղերից է կազմված գյուղատնտեսությունը:
2. ՀՀ գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում ո՞ր ենթաճյուղի տեսակարար կշիռն է մեծ:
3. Քանի՞ մշակաբույս է մշակվում ըստ ՀՀ բնակլիմայական պայմանների :
4. Ո՞ր ճյուղերն ունեն արտահանման նշանակություն:
5. Ո՞ր ճյուղերն ունեն տեղական նշանակություն:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ ՀՀ գյուղատնտեսությունը կազմված է բուսաբուծությունից և անասնապահությունից
- ❖ ՀՀ գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում մեծ է բուսաբուծության տեսակարար կշիռը:
- ❖ ՀՀ բնակլիմայական պայմաններում կարելի է մշակել շուրջ 100 մշակաբույս /աշխարհում մշակաբույսերի թիվը 1600 է/:
- ❖ ՀՀ-ում արտահանման նշանակություն ունեն խաղողագործությունը, պտղաբուծությունը, հարավային բանջարաբուծությունը և ծխախոտագործությունը:
- ❖ ՀՀ-ում տեղական նշանակություն ունեն հացահատիկի, կերաբույսերի և կարտոֆիլի մշակությունը, ինչպես նաև անասնապահությունը:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Թվարկել գյուղատնտեսության ենթաճյուղերը:
- ❖ Ներկայացնել բուսաբուծության ենթաճյուղերը:
- ❖ Ներկայացնել ըստ բնակլիմայական պայմանների մշակվող հիմնական մշակաբույսերը:
- ❖ Թվարկել արտահանման նշանակության ապրանքատեսակները:
- ❖ Թվարկել տեղական նշանակության ապրանքատեսակները:

[Թեմատիկ պլան](#)

Հողային ֆոնդը: Գյուղատնտեսական հողաբարելավումը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ է հողաբարելավումը :

2. Որո՞նք են Հայաստանում հողերի հողաբարելավման հիմնական տեսակները:

3. Ինչ կառուցվածքային բաղադրիչներ ունի ոռոգման համակարգը:

4. Որո՞նք են ՀՀ-ի գլխավոր ջրանցքները:

5. Ինչպե՞ս է ՀՀ-ում գործում ոռոգման միասնական համակարգը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ❖ Հողաբարելավումը միջոցառումների համակարգ է, որի միջոցով բարելավում է հողի վիճակը:
- ❖ Հայաստանում հողերի հողաբարելավման հիմնական տեսակներն են արհեստական ոռոգումը, քարամաքումը, չորացումը, հակաէրոզիոն միջոցառումները:
- ❖ ՀՀ-ում ոռոգման համակարգի կառուցվածքային բաղադրիչներն են՝ ջրանցքները, ջրամբարները, պոմպակայանները:
- ❖ ՀՀ-ի գլխավոր ջրանցքներն են՝ Արզնի-Շամիրամի, Թալինի, Արարատյան, Շիրակի, Մասրիկի, Մխիթանիսայլն:
- ❖ ՀՀ-ում ստեղծվել են բազմաթիվ մեծ փոքր ջրատեխնիկական կառույցներ՝ ջրամբարներ, մայր ջրանցքներ, ջրհան պոմպակայաններ, հզոր խողովակաշարեր:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- ❖ Նշել Արարատյան դաշտում գլխավոր հողաբարելավման տեսակը :
- ❖ Տարբերակել հողաբարելավման հիմնական տեսակները:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ Ախուրյանի ջրամբարը, Էջմիածնի, Թալինի, Շիրակի ջրանցքները:
- ❖ Քարտեզի վրա ցույց տալ ջրանցքները:
- ❖ Թվարկել ջրատեխնիկական կառույցները:

[Թեմատիկ պլան](#)

Բուսաբուծությունը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ մշակաբույսեր են աճեցնում ՀՀ-ում/Թվարկել մի քանիսը/:
2. Ո՞ր բացարձակ բարձրություններն են տարածվում դաշտավարության վերին սահմանը:
3. Որո՞նք են ՀՀ-ում խաղողագործական շրջանները(նշել երկուսը):
4. Ինչպիսի՞ն է ՀՀ ցանքատարածությունների կառուցվածքը ըստ մշակաբույսերի:
5. Ինչպիսի՞ն է այգեգործության ճյուղային կառուցվածքը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- ՀՀ-ում աճող մշակաբույսերից են՝ ցորենը, գարի, հաճարը և այլն:
- Մեր հանրապետությունում դաշտավարության վերին սահմանը հասնում է մինչև 2200մ բարձրությունները:
- ՀՀ-ում խաղողագործական երկու շրջաններից են՝ Արարատյան դաշտը, հյուսիս-արևելքը:
- ՀՀ-ում ըստ մշակաբույսերի ամենամեծ բաժինը ունի հացահատիկային մշակաբույսերը, երկրորդ տեղում՝ կերային, բանջարաբուստանային մշակաբույսերը, ինչպես նաև կարտոֆիլը ու տեխնիկական մշակաբույսերը:
- ՀՀ այգեգործության ճյուղային կառուցվածքում գերակշռում են ընկուզապտուղները, կորիզավորները, հնդավորները, մերձարևադարձային պտուղները:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել մշակաբույսերը:
- Նշել ՀՀ-ի դաշտավարության վերին սահմանը:
- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ խաղողագործության շրջանները /առնվազն երկուսը/:
- Թվարկել լայն տարածում ունեցող մշակաբույսերը:
- Ներկայացնել այգեգործության ճյուղային կառուցվածքը:

[Թեմատիկ պլան](#)

Անասնապահությունը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են ՀՀ անասնապահության գլխավոր ենթաճյուղերը:
2. Ի՞նչ արտադրատեսակներ են ստացվում անասնապահությունից:
3. Ոչխարաբուծության ո՞ր ուղղությունն է զարգացած ՀՀ-ում:
4. **Որո՞նք են խոշոր եղջերավոր անասնաբուծության զարգացման և տեղաբաշխման առանձնահատկությունները:**
5. **Որո՞նք են ՀՀ խոզաբուծության բնորոշ գծերը:**

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- ՀՀ անասնապահության գլխավոր ենթաճյուղերն են խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր անասնապահությունը:
- Անասնապահությունից ստացվում են՝ կաթ, միս, բուրդ, մորթի, կաշի, սալ և այլն:
- ՀՀ-ում զարգացած է ոչխարաբուծության մսակաթնաբրդատու ուղղությունը:
- **Խոշոր եղջերավոր անասնապահությունը կախված է արոտավայրերի առկայությունից , ի տարբերություն անասնապահության մյուս ճյուղերի ավելի համաչափ է տեղաբաշխված:**
- **ՀՀ խոզաբուծությունը աչքի է ընկնում մսի արտադրությամբ և տեղակայված է քաղաքների մերձակայքում, հատկապես կաթի թափոնների և բնական կերով հարուստ անտառաշատ վայրերում:**

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել խոշոր և մանր եղջերավոր կենդանիները:
- Թվարկել այն արտադրատեսակները, որոնք տալիս է անասնապահությունը:
- Թվարկել ոչխարաբուծության տարածման շրջանները:
- Թվարկել խոշոր եղջերավոր անասնապահության գլխավոր շրջանները:
- Թվարկել խոզաբուծության զարգացման առաջատար շրջանները:

Ագրոարդյունաբերական համալիրը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Տնտեսության ո՞ր ճյուղերն են ներառված ագրոարդյունաբերական համալիրում:
2. Սննդի արդյունաբերության ո՞ր ենթաճյուղերն են մասնագիտացված ՀՀ-ում:
3. Որո՞նք են սննդի արդյունաբերության տեղական նշանակության ենթաճյուղերը:
4. Ինչպիսի՞ կառուցվածք և հեռանկար ունի գինու-կոնյակի արտադրությունը Հայաստանում:
5. ՀՀ-ում ինչպիսի՞ դեր ունի հանքային ջրերի արտադրությունը:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Ագրոարդյունաբերական համալիրում ներառված են գյուղատնտեսությունը և սննդի արդյունաբերությունը:
- ՀՀ-ի սննդի արդյունաբերության մասնագիտացված ենթաճյուղերից են մրգի ու բանջարեղենի պահածոների արտադրությունը, գինու-կոնյակի, պահածոների և հանքային ջրերի արտադրությունները:
- Սննդի արդյունաբերության տեղական նշանակության ենթաճյուղերն են պանրագործությունը, ալրադագ և մսի , ծխախոտի, շաքարի, կերակրի աղի, հրուշակեղենի և այլ արտադրատեսակները:
- Գինու-կոնյակի արտադրությունը տեղաբաշխված է խաղողագործական շրջաններում: Խոշոր գործարաններ կան Երևանում, Արմավիրում, Վաղարշապատում, Արտաշատում և Վեդիում:
- Ի տարբերություն սննդի արդյունաբերության մյուս ճյուղերի հումքը ստանում է ոչ թե գյուղատնտեսությունից, այլ երկրի ընդերքից: Ընդ որում ենթակա է արտահանման, հայտնի են «Ջերմուկ», «Արգնի», «Բջինի», «Հանքավան» հանքային ջրերի գործարանները:

առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել ՀՀ ագրոարդյունաբերական համալիրի մասնագիտացված ճյուղերը:
- Թվարկել ՀՀ սննդի արդյունաբերության մասնագիտացման ենթաճյուղերը:
- Թվարկել ՀՀ-ի սննդի արդյունաբերության տեղական նշանակության ենթաճյուղերը:
- Թվարկել հայտնի գինեգործության գործարանները:
- Թվարկել հայտնի հանքային աղբյուրները:

ՀՀ Տրանսպորտի ընդհանուր բնութագիրը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են ՀՀ տրանսպորտի գլխավոր տեսակները:
2. Ի՞նչ առավելություն ունի ավտոմոբիլային տրանսպորտը /թվարկել երկու պատճառ/:
3. Տրանսպորտի ո՞ր տեսակն է գրավում առաջին տեղը բեռնափոխադրումների ծավալով և ուղևորափոխադրումների ընդհանուր քանակով:
4. **Որո՞նք են տրանսպորտի զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշները:**
5. **ՀՀ-ում ինչպե՞ս է զարգացել տրանսպորտը:**

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- ՀՀ-ում առկա տրանսպորտի գլխավոր տեսակներն են՝ երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, խողովակաշարային, էլեկտրահաղորդային:
- ՀՀ տարածքի փոքրությունը և բարդ ռելիեֆի պայմանները նպաստում են ավտոմոբիլային տրանսպորտի առավելությանը:
- ՀՀ-ում բեռնաշրջանառությամբ առաջատարն է երկաթուղային տրանսպորտը, իսկ ուղևորաշրջանառությամբ՝ ավտոմոբիլայինը:
- **Տրանսպորտի զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշներն են՝ բեռնաշրջանառությունն ու ուղևորաշրջանառությունը:**
- **ՀՀ-ում տրանսպորտի աճը տեղի է ունեցել առավելապես փոխադրվող բեռների ծավալների և ուղևորների թվի, բայց ոչ հեռավորությունների աճի հաշվին:**

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Բացատրել ՀՀ տրանսպորտի գլխավոր տեսակների առանձնահատկությունները:
- Թվարկել ավտոմոբիլային տրանսպորտի զարգացման առավելությունները:
- Թվարկել տրանսպորտի միջոցներ, որոնք առաջատար են բեռնաշրջանառությամբ և ուղևորաշրջանառությամբ :
- **Թվարկել տրանսպորտի զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշները:**
- **Ներկայացնել զարգացել տրանսպորտի զարգացումը ՀՀ-ում:**

Տրանսպորտի գլխավոր տեսակները

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են ՀՀ տրանսպորտի գլխավոր տեսակները:
2. Որո՞նք են ՀՀ երկաթուղային հանգույցները:
3. Տրանսպորտի ո՞ր տեսակն է համարվում ամենաերիտասարդը:
4. Որքա՞ն է ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը ՀՀ-ում:
5. Ո՞ր ճանապարհներն են ՀՀ-ում ավելի բարեկարգ:

առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- ՀՀ-ի տրանսպորտի գլխավոր տեսակներն են՝ ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, խողովակաշարային:
- ՀՀ երկաթուղային հանգույցներն են՝ Երևանը, Գյումրին և Հրազդանը:
- ՀՀ-ի ամենաերիտասարդ տրանսպորտի տեսակը խողովակաշարայինն է:
- ՀՀ-ի ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը 10,4 հազ կմ է:
- ՀՀ-ում ավելի բարեկարգ են հանրապետական նշանակության ճանապարհները:

առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել ՀՀ-ի տրանսպորտի գլխավոր տեսակները:
- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ ՀՀ-ի երկաթուղային գլխավոր հանգույցները:
- Նշել ՀՀ-ում ամենաերիտասարդ տրանսպորտի գլխավոր տեսակը:
- Նշել ՀՀ-ում ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը:
- Թվարկել համապետական նշանակության ճանապարհները:

[Թեմատիկ պլան](#)

ՀՀ սպասարման ոլորտը: Ընդհանուր բնութագիրը

Կրթության և գիտության ճյուղերը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են սպասարկման ոլորտի ճյուղերը:
2. Ո՞րն է ՀՀ մայր բուհը:
3. Ինչպիսի՞ արժեքներ են ստեղծվում սպասարկման ոլորտում:
4. Ինչպիսի՞ նշանակություն ունի գիտությունը ՀՀ-ում:
5. Որո՞նք են սպասարկման ոլորտի զարգացումը պայմանավորող հիմնական գործոնները:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Սպասարկման ոլորտի ճյուղերն են՝ առևտուրը, կրթությունը, գիտությունը, առողջապահությունը, մշակույթը, սպորտը, կապը, կենցաղային, ֆինանսավարկային սպասարկումը և այլն:
- ՀՀ մայր բուհը՝ ԵՊՀ-ն է:
- Սպասարկման ոլորտում ստեղծվում են հոգևոր, մշակութային արժեքներ:
- Գիտությունը ունի հիմնարար նշանակություն, բնակչության նյութական և հոգևոր մակարդակի բարձրացման աղբյուր է:
- Սպասարկման ոլորտի զարգացումը պայմանավորող հիմնական գործոններն են՝ զբոսաշրջությունը, ՏՏ ոլորտները, ռազմաարդյունաբերության զարգացումը, բանկաֆինանսական համակարգի ճիշտ կառավարումը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել սպասարկման ոլորտի ճյուղերը :
- Նշել ՀՀ մայր բուհը:
- Թվել սպասարկման ոլորտի ստեղծած արժեքները:
- Բացատրել գիտության նշանակությունը:
- Բացատրել սպասարկման ոլորտի ճյուղերի հետագա զարգացումը:

[Թեմատիկ պլան](#)

Մշակույթը, առողջապահությունը, առևտուրը և այլ ճյուղեր

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Մշակութային ի՞նչ օջախներ գիտեք ՀՀ-ում:
2. Ինչպիսի՞ն է առողջապահության դերը:
3. Որո՞նք ՀՀ ամբողջ տնտեսությանը սպասարկող հատուկ կարևորության ճյուղերը:
4. Որո՞նք են կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նորագույն տեսակները:
5. Ինչի՞ հիման վրա է տեղեկատվական քաղաքականությունը զարգանում:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Մշակութային օջախներ են ՝ թատրոնը, կինոթատրոնը, թանգարանը, գրադարանը, պատկերասրահը և այլն:
- Առողջապահության դերը մեծ է առողջության պահպանման, վերականգման, հիվանդությունների կանխարգելման, բնակչության վերարտադրության, ծննդաբերության սպասարկման և աշխատանքային ռեսուրսների աշխատունակության պահպանման գործում:
- ՀՀ ամբողջ տնտեսությանը սպասարկող հատուկ կարևորություն ունեն մշակույթը, առողջապահությունը, կենցաղային և ֆինանսավարկային սպասարկումը, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը:
- Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նորագույն տեսակներն են ՝ համացանցի միջոցով համակարգիչների, պլանշետների, անդրիոիդ հեռախոսների և ալեհավաքների օգտագործումը:
- Տեղեկատվական տեխնոլոգիաները զարգանում են նորամուծությունների շնորհիվ:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել ՀՀ մշակութային օջախներից մի քանիսը:
- Ներկայացնել առողջապահության դերը մարդու կյանքում:
- Թվարկել ծառայությունների ոլորտի մեջ մտնող ճյուղերից մի քանիսը :
- Նշել տեղեկատվական տեխնոլոգիաների տեսակները:
- Թվարկել կրթության ,գիտության նվաճումները:

[Թեմատիկ պլան](#)

Զբոսաշրջությունը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար:

1. Ի՞նչ դեր ունի զբոսաշրջությունը տնտեսության մեջ:
2. Ինչը՞ն պաստեց ՀՀ-ում զբոսաշրջության զարգացմանը:
3. ՀՀ ո՞ր քաղաքն է համարվում ձմեռային սպորտի համահայկական գլխավոր կենտրոն:
4. Ի՞նչն է նպաստում ճանաչողական զբոսաշրջության զարգացմանը Հայաստանում:
5. Հանգստի կազմակերպման ի՞նչ տեսակներ կան:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Ջրոսաշրջությունը տնտեսության այն ճյուղն է, որն ապահովում է բնակչության հանգստի կազմակերպումը, աշխատանքից ազատ ժամանակի արդյունավետ օգտագործումը, մարդկանց ուժերի և առողջության վերականգնումը:
- ՀՀ-ում զբոսաշրջության զարգացմանը նպաստեցառողջարանային և պատմամշակութային ծառայությունների մակարդակի բարձրացումը, ժամանակակից ավտոմայրուղիների կառուցումը, մասնագետ կադրերի պատրաստումը:
- Ծաղկաձորը ձմեռային սպորտի համահայկական գլխավոր կենտրոնն է:
- Հայաստանում ճանաչողական զբոսաշրջությանը նպաստում է պատմաճարտարապետական և բնական հուշարձանների, վանքերի, վանական համալիրների, ամրոցների, հնագույն բնակատեղիների առկայությունը:
- Հանգստի կազմակերպման տեսակներ են՝ կարճաժամկետ և երկարաժամկետ հանգիստը:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Նշել զբոսաշրջության կարևորությունը ՀՀ-ում:
- Ներկայացնել ՀՀ զբոսաշրջության զարգացման արդի միտումները:
- Քարտեզի վրա ցույց տալ Կոտայքի մարզը և Ծաղկաձոր քաղաքը:
- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ հայտնի պատմաճարտարապետական և բնական հուշարձանները:
- Թվարկել իր բնակավայրի մոտ հանգստի գոտիները:

Հարցեր և առաջադրանքներ «Հայաստանի Հանրապետության տնտեսությունը» բաժնի կրկնության համար

ՀՀ վարչական մարզերը

Թեմատիկ պլան

Արագածոտնի մարզ

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է Արագածոտնի մարզկենտրոնը:
2. Որո՞նք են Արագածոտնի մարզի քաղաքները:
3. Որո՞նք են Արագածոտնի մարզի տնտեսության մասնագիտացման երկու ճյուղերը:
4. Որո՞նք են մարզի պատմամշակութային և բնական հուշարձանները:
5. Որո՞նք են մարզի զարգացման բնական նախադրյալները:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Մարզի մարզկենտրոնը Աշտարակ քաղաքն է:
- Արագածոտնի մարզի քաղաքներն են՝ Աշտարակը, Թալինը, Ապարանը:
- Արագածոտնի մարզի տնտեսության մասնագիտացման ճյուղերն են՝ գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը:
- Մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերն են՝ Սուրբ Գևորգ եկեղեցին, Ամբերդի ամրոցը, սուրբ Մեսրոպ Մաշտոցի շիրիմ-դամբարանը, Բյուրականի նշանավոր աստղադիտարանը, Սաղմոսավանքը, Թալինի քարավանատունը:
- Արագածոտնի մարզի զարգացման բնական նախադրյալներն են օգտակար հանածոների առկայությունը, աշխարհագրական դիրքը, զբոսաշրջության զարգացման հեռանկարները:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մարզի մարզկենտրոնը, քաղաքները:
- Քարտեզի վրա ցույց տալ մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերը:
- Թվարկել մարզի օգտակար հանածոները:
- Նկարագրել մարզի աշխարհագրական դիրքը:

Թեմատիկ պլան

Արարատի մարզ: Արմավիրի մարզ

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են Արարատի և Արմավիրի մարզկենտրոնները:
2. Որո՞նք են Արարատի և Արմավիրի քաղաքները:
3. Որո՞նք են Արարատի և Արմավիրի տնտեսության մասնագիտացման հիմնական ճյուղերը:
4. Որո՞նք են մարզերի պատմամշակութային և բնական հուշարձանները:
5. Որո՞նք են մարզերի զարգացման բնական նախադրյալները:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Մարզի մարզկենտրոններն են՝ Արտաշատ և Արմավիր քաղաքները:
- Արարատի մարզի քաղաքներն են՝ Մասիսը, Արտաշատը, Արարատը, Վեդին: Արմավիրի մարզի քաղաքներն են՝ Արմավիրը, Վաղարշապատը, Մեծամորը:
- Մարզի տնտեսության մասնագիտացման ճյուղերն են՝ գյուղատնտեսություննու արդյունաբերությունը:
- Մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերն են՝ Խոր վիրապը, Խոսրովի արգելոցը, Էջմիածնի վանական կառույցները, Սարդարապատը, Զվարթնոց տաճարը, Արգիշտիխինյի ավերակները և այլն:
- Մարզերի զարգացման նախադրյալներն են՝ օգտակար հանածոների առկայությունը, աշխարհագրական դիրքը, զբոսաշրջության զարգացման հեռանկարները:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մարզերի մարզկենտրոնները, քաղաքները:
- Նշել մարզերի մասնագիտացված ճյուղերը:
- Քարտեզի վրա ցույց տալ մարզերի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերը:
- Նկարագրել մարզերի աշխարհագրական դիրքը:

[Թեմատիկ պլան](#)

Գեղարքունիքի մարզ

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է Գեղարքունիքի մարզկենտրոնը:
2. Որո՞նք են Գեղարքունիքի քաղաքները:
3. Որո՞նք են Գեղարքունիքի տնտեսության մասնագիտացման ճյուղերը:
4. Որո՞նք են մարզի պատմամշակութային և բնական հուշարձանները:
5. Որո՞նք են մարզի զարգացման բնական նախադրյալները:

առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Գեղարքունիքի մարզի մարզկենտրոնը Գավառ քաղաքն է:
- Գեղարքունիքի մարզի քաղաքներն են՝ Մարտունին, Ճամբարակը, Սևանը, Գավառը, Վարդենիսը:
- Մարզի տնտեսության մասնագիտացման ճյուղերն են՝ ձկնաբուծությունը, հանքարդյունաբերությունը, գյուղատնտեսությունը:
- Մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերն են՝ Սևանի ազգային պարկը, Սևանի վանական համալիրը, Նորատուսի խաչքարերը և այլն:
- Մարզի զարգացման բնական նախադրյալներն են՝ Սևանա լիճը, օգտակար հանածոների առկայությունը, աշխարհագրական դիրքը, զբոսաշրջության զարգացման հեռանկարները:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մարզի մարզկենտրոնը, քաղաքները:
- Նշել մարզի մասնագիտացված ճյուղերը:
- Քարտեզի վրա ցույց տալ մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերը:
- Նկարագրել մարզի աշխարհագրական դիրքը:

[Թեմատիկ պլան](#)

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է Լոռու մարզկենտրոնը:
2. Որո՞նք են Լոռու մարզի քաղաքները:
3. Որո՞նք են Լոռու մարզի տնտեսության մասնագիտացման ճյուղերը:
4. **Որո՞նք են մարզի պատմամշակութային և բնական հուշարձանները:**
5. **Որո՞նք են մարզի զարգացման բնական նախադրյալները:**

առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Մարզի մարզկենտրոնը Վանաձոր քաղաքն է:
- Լոռու մարզի քաղաքներն են՝ Տաշիրը, Շամլուղը, Ախթալար, Ալավերդին, Թումանյանը, Ստեփանավանը, Սպիտակը, Վանաձորը :
- Լոռու մարզի տնտեսության մասնագիտացման ճյուղերն են՝ մետաղաձուլությունը, սննդի արդյունաբերությունը, թեթև արդյունաբերությունը և այլն :
- Մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերն են՝ Լոռու բերդը, Օձունի, Հաղպատի, Սանահինի վանական համալիրները, Գյուլագարակի սոճուտը ու Սրգահովտի արգելավայրերը և այլն:
- Օգտակար հանածոների առկայությունը, աշխարհագրական դիրքը, բնական և պատմաճարտարապետական հուշարձանները, գեղատեսիլ բնությունը ունեն հզոր զբոսաշրջության զարգացման հեռանկարները:

առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մարզի մարզկենտրոնը, քաղաքները:
- Նշել մարզի մասնագիտացված ճյուղերը:
- Քարտեզի վրա ցույց տալ մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերը :
- Նկարագրել մարզի աշխարհագրական դիրքը:

[Թեմատիկ պլան](#)

Կոտայքի մարզ

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է Կոտայքի մարզկենտրոնը:
2. Որո՞նք են Կոտայքի քաղաքները:
3. Որո՞նք են Կոտայքի տնտեսության մասնագիտացման ճյուղերը:
4. Որո՞նք են մարզի պատմամշակութային և բնական հուշարձանները:
5. Որո՞նք են մարզի զարգացման բնական նախադրյալները:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Մարզի մարզկենտրոնը՝ Հրազդան քաղաքն է:
- Մարզի քաղաքներն են՝ Հրազդանը, Ծաղկաձորը, Չարենցավանը , Բյուրեղավանը, Նոր Հաճն, Աբովյանը, Եղվարդը :
- Կոտայքի մարզի տնտեսության մասնագիտացման ճյուղերն են՝ մետաղաձուլությունը, թեթև, սննդի, շինանյութերի արդյունաբերությունը, մեքենաշինությունը :
- Մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերն են՝ Հանքավանի ջրաբանական արգելավայրը , Գառնի հեթանոսական տաճարը, Գեղարդը ,սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները և այլն:
- Կոտայքի մարզը աչքի է ընկնում հանգստի, լեռնադահուկային սպորտի, հանքային ջրերի, առողջարանային կենտրոնների և հանքային ջրերի, օգտակար հանածոների , աշխարհագրական դիրքը, սպասարկման ոլորտի, սննդի, գյուղատնտեսության , հանքարդյունաբերության հզոր ներուժով, որոնք հենք են հանդիսանում զբոսաշրջության զարգացմանը:

առարկայի չափորոշչային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մարզի մարզկենտրոնը, քաղաքները:
- Նշել մարզի մասնագիտացված ճյուղերը:
- Քարտեզի վրա ցույց տալ մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերը :
- Նկարագրել մարզի աշխարհագրական դիրքը:

Շիրակի մարզ

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է Շիրակի մարզկենտրոնը:
2. Որո՞նք են Շիրակի քաղաքները:
3. Որո՞նք Շիրակի տնտեսության մասնագիտացման ճյուղերը:
4. **Որո՞նք են մարզի պատմամշակութային և բնական հուշարձանները:**
5. **Որո՞նք են մարզի զարգացման բնական նախադրյալները:**

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Մարզի մարզկենտրոնը՝ Գյումրի քաղաքն է:
- Շիրակի մարզի քաղաքներն են՝ Գյումրին, Արթիկը, Մարալիկը :
- Շիրակի մարզի տնտեսության մասնագիտացման ճյուղերն են՝ թեթև, սննդի, մեքենաշինության, նորագույն տեխնոլոգիաների և շինանյութերի արտադրությունը :
- Մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերն են՝ Արփի լճի ազգային պարկը, Հատիճավանքը, Մակարավանքը, Յոթ վերք, և Սուրբ Ամենափրկիչ եկեղեցիները, Ալեքսանդրապոլի բերդը և այլն:
- Մարզն աչքի է ընկնում հումորային կոլորիտով, պատմամշակութային կոթողներով, եկեղեցիներով, բերդերով, վանական համալիրներով: Վերջին տարիներին հնարավորություններ են առաջանում զբոսաշրջության զարգացման համար:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մարզի մարզկենտրոնը, քաղաքները:
- Նշել մարզի մասնագիտացված ճյուղերը:
- Քարտեզի վրա ցույց տալ մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերը :
- Նկարագրել մարզի աշխարհագրական դիրքը:

[Թեմատիկ պլան](#)

Սյունիքի մարզ

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է Սյունիքի մարզկենտրոնը:
2. Որո՞նք են Սյունիքի քաղաքները:
3. Որո՞նք են Սյունիքի տնտեսության մասնագիտացման ճյուղերը:
4. **Որո՞նք են մարզի պատմամշակութային և բնական հուշարձանները:**
5. **Որո՞նք են մարզի զարգացման բնական նախադրյալները:**

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Մարզի մարզկենտրոնը Կապան քաղաքն է:
- Սյունիքի մարզի քաղաքներն են՝ Սիսիանը, Կապանը, Քաջարանը, Մեղրին, Ագարակը, Դաստակերտը, Գորիսը:
- Սյունիքի մարզի տնտեսության մասնագիտացման ճյուղերից են՝ մետաղաձուլությունը, սննդի և թեթև արդյունաբերությունը :
- **Մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերն են՝ Շաքիի ջրվեժը, Տաթևի վանական համալիրը, Տաթևի ճոպանուղին, Խնձորեսկի ճոճվող կամուրջը, Հալիձորը բերդըն այլն:**
- **Սյունիքի մարզի զարգացման բնական նախադրյալներն են՝ պատմաճարտարապետական հուշարձանները, յուրօրինակ լեռնային ռելիեֆը, մետաղային օգտակար հանածոները, աշխարհագրական դիրքը, որոնք զբոսաշրջության զարգացման հեռանկարներ են բացում:**

առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մարզի մարզկենտրոնը, քաղաքները:
- Նշել մարզի մասնագիտացված ճյուղերը:
- Քարտեզի վրա ցույց տալ մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերը :
- **Նկարագրել մարզի աշխարհագրական դիրքը:**

[Թեմատիկ պլան](#)

Վայոց ձորի մարզ: Տավուշի մարզ

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որոնք են Վայոց ձորի և Տավուշի մարզկենտրոնները:
2. Որոնք են Վայոց ձորի և Տավուշի քաղաքները:
3. Որոնք են Վայոց ձորի և Տավուշի տնտեսության մասնագիտացման ճյուղերը:
4. Որոնք են մարզի պատմամշակութային և բնական հուշարձանները:
5. Որոնք են մարզի զարգացման բնական նախադրյալները:

առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Վայոց ձորի և Տավուշի մարզկենտրոններն են՝ Եղեգնաձոր և Իջևան քաղաքները:
- Վայոց ձորի քաղաքներն են՝ Եղեգնաձորը, Վայքը, Ջերմուկը: Տավուշի մարզի քաղաքներն են՝ Այրումը, Նոյեմբերյանը, Իջևանը, Բերդը, Դիլիջանը:
- Վայոց ձորի մարզի տնտեսության մասնագիտացման ճյուղերն են՝ սննդի արդյունաբերությունը, զբոսաշրջությունը: Տավուշի մարզի տնտեսության մասնագիտացման ճյուղերն են՝ թեթև, սննդի, արդյունաբերությունը, փայտամշակումը և ծխախոտագործությունը:
- Վայոց ձորի մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերն են՝ Ջերմուկի և Հերիերի ջրվեժները, Օրբելյանների քարավանատունը, Կապույտ բերդը, Նորավանքը, Գնդեվանքը, Գլաձորի համալսարանը և այլն: Տավուշի մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերն են՝ Դիլիջանի ազգային պարկը, Իջևանի, Գանձաքարի, Գետիկի արգելավայրերը, Գոշավանքը, Մակարավանքը, Հաղարծինի վանքը, Պարզ լիճը, մի շարք բերդեր և եկեղեցիներ:
- Վայոց ձորի և Տավուշի մարզերը աչքի է ընկնում առողջարանային քաղաքներով՝ Ջերմուկով, Լաստիվերի տեսարժան վայրով: Ինչպես Վայոց ձորի, այնպես էլ Տավուշի մարզերի զարգացման հեռանկարները կապվում են գյուղատնտեսական հումքը վերամշակող արտադրությունների, զբոսաշրջության և ծառայությունների ոլորտների զարգացման հետ:
- *առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*
- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մարզերի մարզկենտրոնները, քաղաքները:
- Նշել մարզի մասնագիտացված ճյուղերը:
- Քարտեզի վրա ցույց տալ մարզի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերը:
- Նկարագրել մարզի աշխարհագրական դիրքը:

Գործնական աշխատանք

[Թեմատիկ պլան](#)

ՀՀ-ն աշխատանքի միջազգային բաժանման համակարգում: Արտաքին տնտեսական կապերը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր երկու ցուցանիշներով են բնութագրվում արտաքին տնտեսական կապերը:
2. Ի՞նչ ապրանքներ են ներմուծում ՀՀ և ի՞նչ ապրանքներ են արտահանում ՀՀ-ից:
3. Ո՞ր երկրների հետ է ՀՀ-ի ամենամեծ ապրանքաշրջանառությունը:
4. Ինչպիսի՞ն է ՀՀ արտաքին տնտեսական կապերը:
5. Ինչպիսի՞ն է աշխատանքի բաժանման համակարգում ՀՀ-ի մասնակցության նախադրյալները:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- ՀՀ արտաքին տնտեսական կապերի բնութագրման ցուցանիշներն են՝ արտահանման, ներմուծման կառուցվածքը և արտահանման, ներմուծման աշխարհագրությունը:
- Ներմուծման կառուցվածքում գլխավորներն են՝ էներգակիրները, սև մետաղները, հացահատիկը, սննդամթերքի տարբեր տեսակները, արդյունաբերական սարքավորումը, ավտոմեքենաները և դեղորայքը: Արտահանման կառուցվածքում կարևոր տեղ են գրավում գունավոր մետալուրգիայի արտադրանքը՝ մոլիբդենի, պղնձի ու բազմամետաղների խտանյույթը, ալյումինի փայլաթիթեղը, թանկարժեք քարերը, ոսկե զարդերը, թարմ մրգերը, պահածոները, հանքային ջրերը, գինու-կոնյակի տեսակները և այլն:
- Արտաքին առևտրի կառուցվածքում գործընկեր պետություններն են՝ Ռուսաստանը և ԱՊՀ անդամ երկրները:
- Արտաքին առևտրի կառուցվածքում մեծ է Իրանի, Գերմանիայի, Բուլղարիայի, Չինաստանի, ԱՄՆ-ի և մի քանի այլ պետությունների բաժինը:
- Աշխատանքի միջազգային բաժանմանը ՀՀ-ի մասնակցության նախադրյալներն են՝ բազմազան բնական հարստությունները, հմուտ մասնագետները և բազմաճյուղ տնտեսությունը:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել ՀՀ ներմուծվող և ՀՀ-ից արտահանվող ապրանքատեսակները:
- Թվարկել ՀՀ-ի գործընկեր պետությունները:
- Քարտեզի վրա ցույց տալ ՀՀ-ի գործընկեր պետությունները:
- Թվարկել աշխատանքի միջազգային բաժանման նախադրյալները:

[Թեմատիկ պլան](#)

ԼՂՀ: Ընդհանուր բնութագիրը: Սահմանները: Բնական պայմանները

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է Արցախի մայրաքաղաքը:
2. Ո՞րն է Արցախի ամենաբարձր լեռնագագաթը:
3. Քանի՞ վարչական շրջանների է բաժանված Արցախը:
4. Որո՞նք են Արցախի պատմամշակութային և բնական հուշարձանները:
5. Որո՞նք են Արցախի զարգացման բնական նախադրյալները:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Արցախի մայրաքաղաքն է Ստեփանակերտը:
- Արցախի ամենաբարձր լեռնագագաթը՝ Գոմշասարն է:
- Արցախի վարչական շրջաններն են՝ Հադրութի, Շահումյանի, Մարտակերտի, Քաշաթաղի, Ասկերանի, Մարտունու, Շուշիի:
- Արցախի պատմամշակութային կոթողները և տեսարժան վայրերն են Ազոխի քարանձավը, Գանձասարը, Ամարասը, Դադիվանքը, Տիգրանակերտը, ՇուշիիՂազանչեցոց եկեղեցին և այլն:
- Արցախի զարգացման բնական նախադրյալներն են՝ պատմաճարտարապետական և բնական հուշարձանները, աշխարհագրական դիրքը, գեղատեսիլ բնությունը: Օգտակար հանածոները, նպաստավոր կլիմայական պայմանները հնարավորություն են ստեղծում զբոսաշրջության զարգացման համար:

առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Քարտեզի վրա ցույց տալ՝ մայրաքաղաքը, ամենաբարձր կետը:
- Նշել վարչական շրջանները:
- Թվարկել պատմամշակութային և բնական հուշարձանները:
- Նկարագրել Արցախի աշխարհագրական դիրքը:

[Թեմատիկ պլան](#)

Բնակչությունը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Ինչպիսի՞ն է բնակչության ազգային կազմը:
2. Ովքե՞ր են Արցախի արմատական բնակիչները:
3. Ո՞ր սեռի ներկայացուցիչներն են գերակշռում Արցախում:
4. Ըստ նշանակության Արցախի համար ինչպիսի՞ քաղաք է Ստեփանակերտը:
5. Արցախի բնակչության թվի աճին նպաստող ինչպիսի՞ նախադրյալներ պետք է մշակել :

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Արցախի բնակչության ազգային կազմը միատարր է:
- Արցախի արմատական բնակիչներն են՝ հայերը, ազգային փոքրամասնություններից ռուսները և հույները:
- Արցախի բնակչության սեռային կազմում գերակշռում են կանայք:
- Ստեփանակերտը վարչա-քաղաքական, ֆինանսական, արդյունաբերական, մշակութային, կրթական, և առողջապահական կենտրոն է:
- Արցախի բնակչության թվի աճին նպաստող նախադրյալներ կարող են հանդիսանալ տարածաշրջանի կայունացումը, բնական աճին նպաստող գործառույթները:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Ներկայացնել Արցախը՝ որպես պատմական հայկական տարածք:
- Բնութագրել Ստեփանակերտի քաղաքի գործառույթները:
- Ներկայացնել Արցախի բնակչության թվի աճին նպաստող գործոնները:

[Թեմատիկ պլան](#)

Տեսությունը

հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են Արցախի գյուղատնտեսության առաջատար ճյուղերը:
2. Ո՞րն է Արցախի սննդի արդյունաբերության գլխավոր ճյուղը:
3. Ո՞րն է Արցախի տրանսպորտի գլխավոր տեսակը:
4. Ո՞րն է Հայաստանի կապող գլխավոր մայրուղին:
5. Ինչպիսի՞ն է Արցախի արտաքին տնտեսական կապերը:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Արցախի գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են հացահատիկի մշակությունը, այգեգործությունը, բանջարաբուծությունը և կաթնամսատու անասնաբուծությունը :
- Արցախի սննդի արդյունաբերության գլխավոր ճյուղերն են պահածոների, գիուկոնյակի, ձեթի արտադրությունը:
- Արցախում տրանսպորտի գլխավոր տեսակը՝ ավտոմոբիլայինն է:
- ՀՀ-ն Արցախի հետ կապող գլխավոր մայրուղին Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ավտոճանապարհն է:
- Արցախի քաղաքա-աշխարհագրական դիրքը թելադրում է հետագա տնտեսական կապերի փոփոխություններ:

առարկայի չափորոշային նվազագույն և միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Թվարկել գյուղատնտեսության առաջատար ճյուղերը:
- Թվարկել սննդի արդյունաբերության ճյուղերը:
- Նշել Արցախի տրանսպորտի գլխավոր տեսակը:
- Քարտեզի վրա ցույց տալ գլխավոր ավտոճանապարհը:
- Բնութագրել Արցախի քաղաքա-աշխարհագրական դիրքը: